ՀՖՖ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՖՈՒՏԲՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՄՐՑԱՇՐՋԱՆ 2026-2027

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 4
ԳԼՈՒԽ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ Դրույթներ 8
Հոդված 1. Կանոնակարգի առարկան, նպատակը և խնդիրները 8
Հոդված 2. Մրցումների նպատակը և խնդիրները 8
Հոդված 3. Մրցումների բարեվարքային համակարգը 9
Հոդված 4. ՀՖՖ գործառույթները 10
Հոդված 5. Մրցաշրջանի ընթացքում ակումբների պարտականությունները 11
Հոդված 6. Մրցումներին մասնակցության չափանիշները 14
Հոդված 7. Մրցումներին մասնակցության համար դիմելու կարգը 14
Հոդված 8. Պարգևատրումը 15
գլուխ 2: մրցումների անցկացումը 17
Հոդված 9. Մրցումների վայրը 17
Հոդված 10. Մրցումների անցկացման կարգը 18
Հոդված 11. Խաղի անցկացման կարգը 22
Հոդված 12. Մրցաշարային աղյուսակում թիմերի դասակարգումը 24
Հոդված 13. Խաղացանկը և անցկացման ժամկետները 24
Հոդված 14. Չկայացած և անավարտ խաղերը 26
Հոդված 15. Թիմերի չներկայանալը խաղին, առաջնություններին մասնակցությունից հրաժարվելը կամ առաջնություններից հեռացվելը 30
Հոդված 16. Վիճարկումը 32
գլուխ 3: մրցումները սպասարկող անձնակազմը 34
Հոդված 17. Սպասարկող անձնակազմի նշանակումը 34
Հոդված 18. Սպասարկման իրականացումը 35
Հոդված 19. Սպասարկող անձնակազմի անդամների գործառույթները 35
Հոդված 20. Սպասարկող անձնակազմի վարձատրությունը 36
գլուխ 4: դաշտի տեր ակումբը 36
Հոդված 21. Դաշտի տեր ակումբի պարտականությունները 36
Գլուխ 5: խաղերի կազմակերպումը 38
Հոդված 22. Նախախաղային խորհրդակցությունը 38

Հոդված 23. Առանձնահատկություններ՝ կախված եղանակային պայմաններից.....39
Գլուխ 6: ֆուտբոլիստների եվ պաշտոնյաների հայտավորումը եվ վերահայտավորումը 39
Հոդված 24. Ֆուտբոլիստների և թիմի անձնակազմի անդամների հայտավորումը և վերահայտավորումը.....40
Հոդված 25. Ֆուտբոլիստների բժշկական ստուգումը.....44
գլուխ 7: Ֆուտբոլիստների մասնակցությունը եվ փոխարինումը 46
Հոդված 26. Ֆուտբոլիստների և թիմի անձնակազմի մասնակցությունը.....46
Հոդված 27. Խաղի արձանագրություն.....49
Հոդված 28. Ֆուտբոլիստների փոխարինումը.....50
գլուխ 8: մարզահագուստը.....53
Հոդված 29. Խաղի մարզահագուստը.....53
Հոդված 30. Մարզահագուստի գույները.....53
Հոդված 31. Խաղահամարները.....54
Հոդված 32. Մարզահագուստի ազգանունները.....55
գլուխ 9: ակումբի անվանման, իրավական խմբի կառուցվածքի փոփոխությունը եվ իրավահաջորդության ճանաչումը.....56
Հոդված 33. Ակումբի ինքնության և իրավական խմբի կառուցվածքի փոփոխությունը 56
Հոդված 34. Ակումբի ինքնության (անվանում, տարբերանշան, գույներ, իրավաբանական հասցե) փոփոխությունը և դրա գրանցումը ՀՖՖ-ում.....57
Հոդված 35. Ակումբի վերակազմակերպումը կամ իրավական խմբի կառուցվածքի փոփոխությունները.....59
Հոդված 36. Իրավահաջորդությունը.....61
գլուխ 10: եզրափակիչ դրույթներ.....62
Հոդված 37. Վեճերի լուծումը 62
Հոդված 38. Այլ հարցեր 62

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՖՖ	«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն
ՖԻՖԱ	Ֆուտբոլի միջազգային ասոցիացիաների ֆեդերացիա
ՈՒԵՖԱ	Ֆուտբոլի եվրոպական ասոցիացիաների միություն
ԻՖԱԲ	Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային խորհուրդ
Ակումբ	Մարզական առումով ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի կանոնակարգերին և սահմանված կիրառելի և վերաբերելի նորմերին ենթարկվող ֆուտբոլային մարզական ակումբ (թիմ), որը մասնակցում է կամ ցանկանում է մասնակցել ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող ֆուտբոլային մրցումներին
Ակումբի պաշտոնյա	Ակումբի աշխատակից, բացառությամբ ֆուտբոլիստների և թիմի անձնակազմի անդամների, ով ֆուտբոլային ակումբի հետ գտնվում է աշխատանքային հարաբերությունների մեջ և/կամ ներառված է ակումբի իրավական խմբի կառուցվածքում և/կամ գրանցված է ՀՖՖ Ֆուտբոլի կառավարման համակարգում՝ որպես ակումբի պաշտոնյա
Առաջնություն	Տվյալ մրցաշրջանի աղջիկների մանկապատանեկան ֆուտբոլի ակումբների միջև անցկացվող ՀՀ ֆուտբոլի առաջնություն

Արտակարգ իրավիճակ/Ֆորս մաժոր	Ֆորս մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք առաջացել են հանդիպման մասնակցի և կազմակերպչի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), համաճարակները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները, գործադուլները, որոնք խոչընդոտում են ֆուտբոլային հանդիպման՝ պատշաճ և ըստ նախատեսվածի կազմակերպմանը և/կամ անցկացման
Թիմի անձնակազմ	Ակումբի աշխատակիցներ, այդ թվում՝ մարզչական և տեխնիկական անձնակազմի անդամներ, որոնք հայտավորված են ՀՖՖ աղջիկների մանկապատանեկան մրցումներինմասնակցելու համար
Խաղացանկ	Խաղային օրերի ժամանակացույց
Խաղաշրջան	Ֆուտբոլային տարվա կտրվածքով առաջին պաշտոնական խաղով մեկնարկող և վերջին պաշտոնական խաղով ավարտվող ժամանակաշրջան
Խաղի ժամանակահատված	Խաղասկզբից 2 ժամ առաջ, խաղի ժամանակ, ընդմիջմանը և խաղից 1 ժամ հետո ընկած ժամանակահատված
Խաղի կանոններ	«Ֆուտբոլ խաղի» գործող կանոններ՝ ըստ ԻՖԱԲ-ի

Կանոնակարգ	ՀՖՖ աղջիկների մանկապատանեկան ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգ (2026-2027 մրցաշրջան)
Համապատասխանելիության հավաստագիր	ՀՖՖ ենթակառուցվածքային կանոնակարգի չափանիշների համաձայն՝ ՀՖՖ-ի կողմից տրվող համապատասխան փաստաթուղթ
Հանդիպման (խաղի) կազմակերպիչ	Դաշտի տեր ակումբ, որն ապահովում է ֆուտբոլային հանդիպման կազմակերպման և անցկացման աշխատանքները
Հանդիպման (խաղի) մասնակից	Ֆուտբոլիստ, թիմի անձնակազմ, ֆուտբոլային հանդիպումը սպասարկող անձնակազմ և հանձնակատար
Հյուր թիմ	Ֆուտբոլային հանդիպում կազմակերպող թիմի դաշտում խաղին մասնակցող մրցակից թիմ
ՀՖՖ գործադիր կոմիտե	ՀՖՖ-ի կանոնադրությամբ նախատեսված կոլեգիալ կառավարման մարմին
ՀՖՖ մրցավարական և տեսչական դեպարտամենտ	Հանդիպման մրցավարներին և տեսուչին նշանակող մարմին
ՀՖՖ նույնականացման քարտի համար (ID)	Ֆուտբոլային օբյեկտների և սուբյեկտների անհատական համար, որը տրվում է Ֆուտբոլի կառավարման համակարգում գրանցվելիս
ՀՖՖ պաշտոնյա	ՀՖՖ-ի լիազորված հաստիքային աշխատակից, տեսուչ, հանձնակատար, կոմիտեի անդամ, հանձնաժողովների և ՀՖՖ-ի այլ իրավասու մարմինների անդամ
Մարզադաշտ	ՀՖՖ-ի կողմից համապատասխանելիության հավաստագիր ստացած մարզական

	շինություն, որտեղ անցկացվում է ֆուտբոլային հանդիպումը
Մրցաշրջան	Ժամանակաշրջան, որը մեկնարկում է օրացուցային տվյալ տարվա հուլիսի 1-ին և ավարտվում հաջորդ տարվա հունիսի 30-ին
Մրցավար	ՀՖՖ-ի կողմից նշանակված խաղի մրցավար
Մրցավարի օգնական	ՀՖՖ-ի կողմից նշանակված խաղի մրցավարի օգնական
Մրցումներ	ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող աղջիկների մանկապատանեկան ֆուտբոլի մրցաշարեր
Ֆուտբոլի կառավարման համակարգ (FMS)	Էլեկտրոնային տեղեկատվական համակարգ, որը հնարավորություն է տալիս կատարել բոլոր գործառույթները, որոնք ընդգրկում են ֆուտբոլային ենթակառուցվածքների, ֆուտբոլային ակումբների, ֆուտբոլիստների, մրցումների կազմակերպման և անցկացման, նախախաղային և ետխաղային տվյալների կառավարումը
Ֆուտբոլիստ (խաղացող)	Սիրողական կարգավիճակ ունեցող ֆուտբոլիստ, որը հայտավորված է տվյալ առաջնությանը մասնակցելու նպատակով
Ֆուտբոլային սուբյեկտներ	Մանկապատանեկան ֆուտբոլում ներգրավված իրավաբանական և ֆիզիկական անձինք

ԳԼՈՒԽ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Կանոնակարգի առարկան, նպատակը և խնդիրները

1.01 Սույն կանոնակարգը սահմանում է ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող աղջիկների մանկապատանեկան ֆուտբոլի մրցումների կազմակերպման և անցկացման սկզբունքները, ֆուտբոլային սուբյեկտների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և այլ ընթացակարգային հարցերը տվյալ մրցումների ընթացքում, կարգավորում է աղջիկների մանկապատանեկան ֆուտբոլի մրցումներին մասնակցող ակումբների իրավունքներն ու պարտականությունները:

1.02 Սույն կանոնակարգը վերաբերվում է ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող աղջիկների մանկապատանեկան առաջնությունների՝ Մ-15, Մ-13 և Մ-11 տարիքային խմբերին:

1.03 Կանոնակարգի խնդիրներն են՝

ա) Մրցումների կազմակերպման, անցկացման, ղեկավարման և հսկողության ընթացակարգերի սահմանումը:

բ) Մրցումների մասնակիցների համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և ապահովումը:

գ) Մրցումների համակարգի համապատասխանեցումը ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի հիմնարար փաստաթղթերի պահանջներին:

Հոդված 2. Մրցումների նպատակը և խնդիրները

2.01 Մրցումների նպատակն է՝

ա) ՀՀ տարածքում նպաստել աղջիկների մանկապատանեկան ֆուտբոլի հետագա զարգացմանը:

բ) Նպաստել ֆուտբոլիստների մասնագիտական որակների և ուսուցման գործընթացի մակադրակի հետագա բարձրացմանը:

գ) Ապահովել ազգաբնակչության մանկապատանեկան հասակի աղջիկների համակողմանի ֆիզիկական զարգացումը:

դ) Ի հայտ բերել հեռանկարային, խոստումնալից, տաղանդավոր ֆուտբոլիստների:

ե) Նպաստել կանանց ֆուտբոլի Բարձրագույն և Առաջին խմբերի թիմերի համալրման համար արժանի հերթափոխի պատրաստման գործընթացին:

զ) Նպաստել «Արդար խաղի» սկզբունքների արմատավորմանը և կենսագործմանը:

է) Նպաստել կանանց ֆուտբոլի մասսայականացմանը տարիքային տարբեր խմբերում:

2.02 Մրցումների խնդիրներն են՝

ա) Մ-15 և Մ-13 տարիքային խմբերի թիմերի դասակարգումը՝ ըստ առաջնության արդյունքների (բացառությամբ Մ-11 տարիքային խմբի առաջնության):

բ) Ի հայտ բերել Մ-15 և Մ-13 տարիքային խմբի մրցանակակիրներին՝

- Մ-15 և Մ-13 տարիքային խմբերի առաջնությունների ռմբարկու,
- Մ-15 և Մ-13 տարիքային խմբերի առաջնությունների լավագույն ֆուտբոլիստ:

Հոդված 3. Մրցումների բարեվարքային համակարգը

3.01 Մրցումների բարեվարքային համակարգն ապահովելու նպատակով՝

ա) արգելվում է միևնույն իրավաբանական կամ ֆիզիկական անձի կամ նրա հետ փոխկապակցված անձանց կողմից ֆինանսավորվող մեկից ավելի ակումբների մասնակցությունը ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող աղջիկների մանկապատանեկան ֆուտբոլի մրցումների տվյալ առաջնությանը,

բ) արգելվում է որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի ուղղակի կամ անուղղակի միաժամանակյա ցանկացած ներգրավվածությունը ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող աղջիկների մանկապատանեկան ֆուտբոլի մրցումների տվյալ առաջնությանը մասնակից մեկից ավելի ակումբների վարչական և/կամ մարզական ղեկավարմանը,

գ) արգելվում է որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի ցանկացած վերահսկողությունը կամ այլ կերպ դրսևորվող ազդեցությունը ՀՖՖ-ի հովանու

ներքո անցկացվող աղջիկների մանկապատանեկան ֆուտբոլի մրցումների տվյալ առաջնությանը մասնակից մեկից ավելի ակումբների նկատմամբ,

դ) արգելվում է ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող աղջիկների մանկապատանեկան ֆուտբոլի մրցումներին մասնակից ակումբների և/կամ ֆուտբոլային բոլոր սուբյեկտների կողմից պայմանավորված խաղեր կազմակերպելը, կազմակերպման փորձ կատարելը կամ այդ արարքների մասին չհայտնելը,

ե) սույն հոդվածի 3.01 մասի «ա» կետի իմաստով անձի փոխկապակցված լինելու հանգամանքը որոշում է ՀՖՖ-ն՝ հիմք ընդունելով ՀՀ օրենսդրության, ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի կանոնակարգերի դրույթները և իր տրամադրության տակ առկա փաստական տվյալները:

Հոդված 4. ՀՖՖ գործառույթները

4.01 Առաջնությունների կազմակերպումն ու վերահսկումը իրականացվում է ՀՖՖ-ի կողմից՝ հիմնվելով ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի կողմից ճանաչված, առաջնությունների հետ կապված բացառիկ իրավասությունների վրա:

4.02 ՀՖՖ-ն իրականցնում է մրցումների ընդհանուր ղեկավարումը, մասնավորապես՝

- հաստատում է մրցումների անցկացման կանոնակարգը և խաղացանկերը,
- հաստատում է մրցումների մասնակից ֆուտբոլային սուբյեկտների միջև իրավահարաբերությունները կարգավորող փաստաթղթերը,
- յուրաքանչյուր մրցաշրջանից առաջ հաստատում և ակումբներին է ուղարկում տվյալ առաջնությանը ակումբների մասնակցության հավաստագիր ներկայացնելու կարգը,
- հաստատում է մրցումների մասնակից թիմերի հավաստագրման հայտերը,
- հաստատում է թիմերի անձնակազմի անդամների աշխատանքային պայմանագրերի հայտերը,
- հաստատում է թիմերի անձնակազմի անդամների և ֆուբոլիստների գրանցման հայտերը,
- հաստատում է թիմերի անձնակազմի անդամների և ֆուտբոլիստների հայտավորումը,
- հաստատում է մրցումները սպասարկող մրցավարների կազմը,
- հաստատում է խաղի պաշտոնյաների վարձատրության գումարի չափը,

- կազմակերպում է խաղերը և իրականացնում դրանց նկատմամբ հսկողությունը,
- ամփոփում է հանդիպումների արդյունքները,
- հաստատում է առաջնությունների արդյունքները և իրականացնում մրցանակակիրների պարգևատրումը,
- իրականացնում է սույն կանոնակարգով նախատեսված դեպքերում և կարգով հանդիպումների հետաձգումը (դրանց անցկացման ամսաթվի, մեկնարկի ժամանակի և վայրի փոփոխություն),
- ապահովում է Ֆուտբոլի կառավարման համակարգում առկա բոլոր հանդիպումների տվյալների մուտքագրումը,
- իրականացնում է վերահսկողություն կիրառելի և վերաբերելի կանոնակարգերի շրջանակներում:

Հոդված 5. Մրցաշրջանի ընթացքում ակումբների պարտականությունները

5.01 Մրցումների ընթացքում ակումբները, ակումբի ֆուտբոլիստները, թիմի անձանակազմը, պաշտոնյաները և այլ անձինք, ովքեր փոխկապակցված են տվյալ ակումբի հետ, պարտավոր են՝

ա) անշեղորեն հետևել գործող ԻՖԱԲ խաղի կանոններին, ՀՖՖ կանոնադրությանը, կանոնակարգերի դրույթներին և ընդունել, կատարել ՀՖՖ գործադիր կոմիտեի, ՀՖՖ վարչական անձնակազմի, ՀՖՖ այլ մարմինների կողմից ընդունված և պատշաճ կերպով ծանուցված որոշումները, շրջաբերականները: Պատշաճ է համարվում ներքոնշյալ՝ առձեռն՝ ակումբի ղեկավար անձնակազմի համապատասխան պաշտոնատար անձի ստորագրությամբ, փոստով, ակումբի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով, ՀՖՖ Ֆուտբոլի կառավարման համակարգի միջոցով կամ ՀՖՖ պաշտոնական վեբ կայքում (www.ffa.am) հրապարակման միջոցով ծանուցումը, ընդ որում, պատշաճ է համարվում նշված միջոցներից ինչպես մեկով, այնպես էլ մի քանիսով կամ բոլորով կատարված ծանուցումը: Առանձին դեպքերում սույն և ՀՖՖ այլ կանոնակարգերով կարող են սահմանվել այդ կանոնակարգ(եր)ի շրջանակներում ծանուցման հիմնական եղանակ(ներ),

բ) Ֆուտբոլի կառավարման համակարգի՝ որպես էլեկտրոնային տեղեկատվական գործիքի տեխնիկական կամ այլ եղանակով խափանման դեպքում առաջնորդվել բացառապես ՀՖՖ, ՖԻՖԱ և ՈՒԵՖԱ կանոնակարգերի դրույթներով և իրացնել

իրավունքներն և պարտականությունները դրանցով սահմանված կարգով և ժամկետներում,

գ) տեղեկացնել ՀՖՖ-ին ֆուտբոլային միջազգային կարգապահական կամ ազգային դատարաններում ցանկացած վարույթի և դրա արդյունքների մասին, որի շրջանակներում ակումբները, ֆուտբոլիստները, թիմի անձնակազմը կամ նրանց պաշտոնյաները ազգային կամ միջազգային մակարդակով ներգրավված են հանդիպման/հանդիպումների արդյունքի վրա նպատակաուղղված ցանկացած գործողության կազմակերպման և ազդեցության մեջ անկախ նրանից՝ ակումբը կամ նրա պաշտոնյան իրեն պատասխանատու կամ մեղավոր համարում է, թե ոչ,

դ) եթե քննության արդյունքում ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեն եզրակացնում է, որ ակումբի և/կամ նրա պաշտոնյայի կողմից ուղղակի կամ անուղղակի իրականացվել է ազգային և/կամ միջազգային հանդիպման/հանդիպումների արդյունքի/արդյունքների վրա նպատակաուղղված կազմակերպման և ազդեցության ցանկացած գործողություն, ապա ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեն կարող է արգելել այդ ակումբին հանդես գալ իր հովանու ներքո անցկացվող մրցումներում: Նման որոշում կայացնելիս ՀՖՖ-ն կարող է, բայց պարտավորված չէ, հիմնվել ազգային կամ միջազգային սպորտային իրավասու մարմինների, արբիտրաժային դատարանի կամ պետական դատարանների որոշումների վրա: ՀՖՖ-ն կարող է ձեռնպահ մնալ ակումբին մրցումներին մասնակցելու իրավունքից զրկելուց, եթե ՀՖՖ-ն համոզված է, որ ազգային կամ միջազգային մարզական մարմնի, արբիտրաժային դատարանի կամ պետական դատարանի կողմից նույն փաստական հանգամանքների հիման վրա ընդունված որոշումով ակումբն արդեն իսկ չի կարողանա մասնակցել ՀՖՖ մրցումներին,

ե) տարեկան մեկ անգամ՝ մինչև տվյալ խաղաշրջանում տվյալ թիմի առաջին պաշտոնական խաղը, ֆուտբոլիստների բժշկական ստուգումն ապահովում են ակումբները՝ բուժհաստատության կողմից տրված համապատասխան ստուգման թերթիկի հիման վրա, որը պետք է լրացվի և հատկացվի ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված կամ ՀՖՖ Բժշկական կանոնակարգում նախատեսված կարգով և կնքվի բժշկական հաստատության կնիքով և հավաստվի բժշկական հաստատության գործադիր տնօրենի, իսկ նրա բացակայության

դեպքում՝ գործադիր տնօրենի բուժական կամ արտահիվանդանոցային գծով տեղակալի ստորագրությամբ,

զ) վարել ֆուտբոլիստների ստացած դեղին և կարմիր քարտերի հաշվառումը և ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի համապատասխան հոդվածի կետերով նախատեսված խախտումներ հայտնաբերելու դեպքերում կիրառել այդ Կանոնակարգով նախատեսված պատասխանատվության միջոցները՝ առանց ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշման,

է) մրցումներին մասնակցող ֆուտբոլիստ(ներ)ի/թիմի անձնակազմի անդամ(ներ)ի՝ խաղի ժամանակահատվածում կարմիր քարտ ստանալու դեպքում վերջիններս ավտոմատ կերպով բաց են թողնում նվազագույնը մեկ խաղ (հաջորդ)՝ ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգով սահմանված կարգով, մինչև ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեն կկայացնի որոշում բաց թողնվելիք խաղերի վերջնական քանակի և ժամկետի վերաբերյալ:

5.02 Ակումբները պատասխանատու են՝

ա) խաղերի արձանագրությունում նշված ֆուտբոլիստների և թիմի անձնակազմի՝ խաղին մասնակցելու իրավասության համար (խաղի արձանագրությունում նշված լինելը համարվում է խաղին մասնակցություն),

բ) խաղի ժամանակահատվածում իրենց ֆուտբոլիստների, վարչական անձանակազմի, ինչպես նաև իրենց երկրպագուների՝ ՀՖՖ կանոնակարգերով արգելված անօրինական, անթույլատրելի, ոչ սպորտային և անվայել գործողությունների համար,

գ) մարզադաշտում գտնվող շինությունների, հանդերձարանների և այլ գույքի պատշաճ օգտագործման և դրա՝ մինչև օգտագործումն առկա վիճակի պահպանման համար,

դ) ՀՖՖ-ին պաշտոնապես ոչ հավաստի տեղեկություն ներկայացնելու համար:

ե) հոգալ ակումբի թիմ/եր/ի ծախսերը (2 խաղային մարզահագուստ, ճանապարհածախս, օրապահիկ, գիշերավարձ և այլն):

5.03 Ակումբներին արգելվում է՝

ա) միջամտել խաղը սպասարկող անձնակազմի գործողություններին, այն է՝ դրսևորել այնպիսի գործունեություն կամ դրսևորել անգործություն, որը խոչընդոտում է կամ կարող է խոչընդոտել խաղը սպասարկող անձնակազմի

բնականոն գործունեությանը կամ ազդում է կամ կարող է ազդել խաղի ընթացքի կամ ելքի վրա,

բ) ներկայացնել ՀՖՖ-ն կամ օգտագործել ՀՖՖ-ի դրոշը և խորհրդանիշը (տարբերանշանը)՝ բացառությամբ ՀՖՖ-ի կողմից տրված գրավոր թույլտվության առկայության դեպքերի:

Հոդված 6. Մրցումներին մասնակցության չափանիշները

6.01 Մրցումներին կարող են մասնակցել այն ակումբները, որոնք ունեն իրավաբանական անձի կարգավիճակ, ընդունում են ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի հիմնարար սկզբունքները, կանոնադրություններն ու կանոնակարգերը, ՀՖՖ-ի նկատմամբ չունեն չկատարված պարտավորություն(ներ), այդ թվում՝ չվճարված տուգանք կամ չմարված կարգապահական տույժ, և պարտավորվում են կատարել վերոնշյալ կազմակերպությունների, ինչպես նաև սույն կանոնակարգի պահանջները:

6.02 Թիմերը ներկայացնող ակումբները հաստատում են իրենց թիմի (թիմերի) մասնակցությունը մրցումներին՝ ՀՖՖ կողմից ներկայացվող շրջաբերականում նշված օրից՝ ՀՖՖ ֆուտբոլի կառավարման համակարգում կատարելով հավաստագրում, որտեղ պետք է նշել թիմի անվանումը, առաջնությանը մասնակցող խումբը, մարզադաշտը, որտեղ անցկացնելու են տնային հանդիպումները:

6.03 Առաջնություններին մասնակցելու համար մուտքավճար չի պահանջվում:

Հոդված 7. Մրցումներին մասնակցության համար դիմելու կարգը

7.01 Մրցումներին մասնակցելու համար մասնակից ակումբները ՀՖՖ կողմից ներկայացվող շրջաբերականում նշված օրից պետք է անցնեն հավաստագրման գործընթաց Ֆուտբոլի կառավարման համակարգում՝ ըստ պահանջվող փաստաթղթերի:

7.02 Եթե ակումբի կողմից աղջիկների մանկապատանեկան առաջնություններին մասնակցելու համար ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Ֆուտբոլի կառավարման համակարգի սահմանված պահանջներին, ապա դրանք չեն ընդունվում ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժնի կողմից, որի մասին ակումբը ծանուցվում է Ֆուտբոլի կառավարման համակարգի միջոցով, որից հետո ակումբը կարող է

համալրել փաստաթղթերը և/կամ ուղղել առկա այլ սխալները Ֆուտբոլի կառավարման համակարգում սահմանված ժամկետներին և պահանջներին համապատասխան: Ֆուտբոլի կառավարման համակարգում սահմանված ժամկետներից դուրս ներկայացված հավաստագրման հայտերը մերժվում են ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժնի կողմից, և տվյալ ակումբը կարող է զրկվել տվյալ առաջնությանը մասնակցելու իրավունքից:

Հոդված 8. Պարգևատրումը

8.01 Մ-15 և Մ-13 տարիքային խմբերի առաջնությունների ավարտից հետո ՀՖՖ-ն պարգևատրում է բոլոր մրցնակակիրներին:

8.02 Մրցանակակիր ակումբները նախապես՝ մինչև պարգևատրման օրը ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժին են ներկայացնում պարգևատրման ենթակա անձանց ցուցակը:

8.03 Մ-15 տարիքային խմբի առաջնության առաջին տեղ գրաված թիմը պարգևատրվում է գավաթով և 30 հատ ոսկե մեդալով:

8.04 Մ-13 տարիքային խմբի առաջնության առաջին տեղ գրաված թիմը պարգևատրվում է գավաթով և 25 հատ ոսկե մեդալով:

8.05 Մ-15 և Մ-13 տարիքային խմբերի առաջնությունների լավագույն ֆուտբոլիստը որոշվում և հաստատվում է ՀՖՖ կանանց ֆուտբոլի կոմիտեի կողմից՝ հաշվարկելով մասնակից թիմերի մարզիչների կողմից ներկայացված ֆուտբոլիստների թեկնածուներին:

8.06 Առաջնության ավարտից հետո ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժինը մասնակից թիմերի մարզիչներին է ուղարկում սահմանած ձևաթուղթը, որտեղ յուրաքանչյուր մարզիչ պետք է նշի տվյալ առաջնության «Լավագույն ֆուտբոլիստ»-ի իր 3 թեկնածուներին, որոնք պետք է լինեն այլ թիմի ֆուտբոլիստներ: 3 թեկնածուներին պետք է նշել հերթականությամբ՝ 1-ին տեղի ֆուտբոլիստին գրանցելով 5 միավոր, 2-րդ տեղի ֆուտբոլիստին՝ 3 միավոր և 3-րդ տեղի ֆուտբոլիստին՝ 1 միավոր: Մարզիչները թեկնածուների ցուցակը առաջնության ավարտից 5 օր անց ուղարկում են ՀՖՖ-ի կանանց ֆուտբոլի բաժնի էլեկտրոնային հասցեին (womens@ffa.am):

Հավասար միավորների դեպքում ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժինը լրացուցիչ կտեղեկացնի մարզիչներին թեկնածուների անունները, որոնցից մարզիչները կընտրեն իրենց լավագույն ֆուտբոլիստին: Յուրաքանչյուր դեպքում վերջնական որոշումը կայացնում է ՀՖՖ կանանց ֆուտբոլի կոմիտեն:

Քվեարկությունը ամփոփելուց հետո ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժինը արդյունքների վերաբերյալ ծանուցում է ակումբներին էլեկտրոնային նամակի տեսքով, և վերոնշյալ տեղեկատվությունը հրապարակվում է ՀՖՖ պաշտոնական կայքում:

8.07 Մ-15 և Մ-13 տարիքային խմբի առաջնությունների լավագույն ֆուտբոլիստի մրցույթում առաջին տեղը զբաղեցրած ֆուտբոլիստը պարգևատրվում է «Լավագույն ֆուտբոլիստ» մրցանակով:

8.08 Մ-15 և Մ-13 տարիքային խմբի առաջնությունների առավել թվով գոլեր խփած ֆուտբոլիստը, որպես լավագույն ռմբարկու պարգևատրվում է «Լավագույն ռմբարկու» մրցանակով: Այն պարագայում, եթե մեկից ավելի ֆուտբոլիստներ խփել են նույն քանակի գոլեր, ապա «Լավագույն ռմբարկու» մրցանակով պարգևատրվում են վերոնշյալ բոլոր ֆուտբոլիստները:

8.09 Մրցումների մասնակիցների համար ՀՖՖ նախագահի կամ գործադիր կոմիտեի որոշմամբ կարող են սահմանվել այլ պարգևատրումներ:

ԳԼՈՒԽ 2: ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

Հոդված 9. Մրցումների վայրը

9.01 Մրցումների մասնակից ակումբը իր տնային հանդիպումները պետք է անցկացնի իրեն սեփականության իրավունքով պատկանող կամ իր օրինական տիրապետման տակ գտնվող մարզադաշտերում, որը նախապես նշվում է Ֆուտբոլի կառավարման համակարգում տվյալ առաջնության և տվյալ մրցաշրջանի համար հավաստագրման գործընթացում: Ակումբի կողմից ներկայացված մարզադաշտը պետք է համապատասխանի ՀՖՖ ենթակառուցվածքային կանոնակարգի տվյալ մրցաշարի համար ենթակա մարզադաշտերի վերաբերյալ սահմանված պահանջներին և ՀՖՖ արտոնագրման բաժնի կողմից մրցաշրջանից առաջ ստացած լինի համապատասխանելիության հավաստագիր:

9.02 Յուրաքանչյուր խաղի համար տվյալ մարզադաշտի պատրաստ լինելը որոշում է խաղի մրցավարը նախախաղային խորհրդակցության ժամանակ՝ հիմք ընդունելով ՀՖՖ ենթակառուցվածքային և ՀՖՖ աղջիկների մանկապատանեկան ֆուտբոլի առաջնության անցկացման կանոնակարգում սահմանված պահանջները:

9.03 Խաղի օրն առաջացած արտակարգ իրավիճակների/ֆորս-մաժորի, ինչպես նաև տվյալ հանդիպմանը մարզադաշտի՝ ցանկացած այլ պատճառով պատրաստ չլինելու դեպքում հանդիպման մրցավարը կայացնում է վերջնական որոշում խաղը տվյալ մարզադաշտում անցկացնելու կամ հետաձգելու վերաբերյալ՝ նախապես խորհրդակցելով ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժնի հետ:

9.04 Մրցաշրջանի ընթացքում հիմնական մարզադաշտի՝ այս կամ այն պատճառով հանդիպումներն ընդունելու համար ոչ պիտանի դառնալու պարագայում աղջիկների մանկապատանեկան ֆուտբոլի մրցումների շրջանակներում անցկացվող հանդիպումը կարող է տեղափոխվել մեկ այլ մարզադաշտ, եթե նախաձեռնող ակումբն այդ մասին հանդիպումից առնվազն 3 աշխատանքային օր առաջ գրավոր դիմել է է ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժին և ստացել համապատասխան

թույլտվություն: Մարզադաշտի տեղափոխման նպատակահարմարության վերաբերյալ վերջնական որոշումը կայացնում է է ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժինը, որի մասին ակումբը ծանուցվում է իր էլեկտրոնային փոստի հասցեով:

9.05 ՀՖՖ ներկայացուցիչները կարող են այցեր և ստուգումներ իրականացնել ցանկացած մարզադաշտ մրցաշրջանից առաջ և ընթացքում: Ակումբները պարտավոր են լիովին համագործակցել ՀՖՖ-ի հետ նման ստուգումների ընթացքում:

Հոդված 10. Մրցումների անցկացման կարգը

10.01 Մրցումները անցկացվում են հետևյալ տարիքային խմբերով՝

- Մ-15 տարեկանների առաջնություն,
- Մ-13 տարեկանների առաջնություն,
- Մ-11 տարեկանների առաջնություն:

10.02 Առաջնության մեկնարկի համար յուրաքանչյուր տարիքային առաջնությունում պետք է ընդգրկված լինի առնվազն 4 թիմ և առավելագույնը 12 թիմ:

10.03 12 թիմից ավել լինելու դեպքում ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժինը թիմերին բաժանում է ենթախմբերի:

10.04 Մ-13 և Մ-15 տարեկանների ենթախմբերի բաժանվելու դեպքում առաջնությունները անցկացվում են 2 փուլով՝ կանոնավոր առաջնություն և փլեյ-օֆֆ-ի տեսքով:

10.05 Փլեյ-օֆֆ փուլը սկսում է 1/2 եզրափակչից:

10.06 Երկու խմբի դեպքում խմբերում առաջին և երկրորդ տեղերը զբաղեցրած թիմերը միմյանց հետ մրցում են 1/2 եզրափակիչ փուլում՝ առաջին խմբում 1-ին տեղը զբաղեցրած թիմը մրցում է երկրորդ խմբում երկրորդ տեղը զբաղեցրած թիմի հետ, իսկ երկրորդ խմբում 1-ին տեղը զբաղեցրած թիմը մրցում է առաջին խմբում երկրորդ տեղը զբաղեցրած թիմի հետ:

10.07 Երեք խմբի դեպքում խմբերում առաջին տեղը գրաված թիմերը և լավագույն արդյունք ցուցաբերած երկրորդ տեղը գրաված թիմը մրցում են միմյանց հետ:

Երկրորդ տեղը գրված թիմը որոշվում է հետևյալ կերպ՝

- Եթե խմբերում առկա են հավասար քանակով թիմեր, ապա երկրորդ տեղը գրված թիմը որոշվում է ըստ միավորների։
  Հավասար միավորների դեպքում թիմերի առավելությունն՝ ըստ ստորև նշված հերթականության, տրվում է այն թիմին, որը՝
  ա) տվյալ առաջնության խաղերում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,
  բ) տվյալ առաջնության խաղերում խփել է ավելի շատ գոլ,
  գ տվյալ առաջնության բոլոր հանդիպումներում ունի ավելի շատ հաղթանակ,
  դ) տվյալ առաջնությունում ունի ավելի քիչ կարմիր քարտ,
  ե) տվյալ առաջնությունում ունի ավելի քիչ դեղին քարտ,
  զ) ունի «Արդար խաղ»-ի առավել բարձր ցուցանիշ,
  է) ընտրվել է վիճակահանությամբ։
- Եթե խմբերում առկա չեն հավասար քանակով թիմեր, ապա երկրորդ տեղը գրված թիմերը խաղում են միմյանց հետ մեկական խաղ և ըստ միավորների որոշվում է երկրորդ տեղը գրված թիմը ։ Մարզադաշտի ընտրությունը կատարում է ՀՖՖ-ն՝ չեզոք մարզադաշտում։ Դաշտի տիրոջ կարգավիճակը որոշվում է վիճակահանությամբ և դաշտի տեր համարվող ակումբն ունենում է այն իրավունքները, որոնք վերապահված են դաշտի տեր թիմին՝ սույն կանոնակարգի դրույթներին համապատասխան։
  Հավասար միավորների դեպքում թիմերի առավելությունն՝ ըստ ստորև նշված հերթականության, տրվում է այն թիմին, որը՝
  ա) հավակնորդ թիմերի միջև խաղերում վաստակել է ավելի շատ միավոր,
  բ) հավակնորդ թիմերի միջև խաղերում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,
  գ) հավակնորդ թիմերի միջև խաղերում խփել է ավելի շատ գոլ,
  դ) տվյալ առաջնության բոլոր հանդիպումներում ունի ավելի շատ հաղթանակ,
  ե) տվյալ առաջնության բոլոր հանդիպումներում խփել է ավելի շատ գոլ,
  զ) տվյալ առաջնության բոլոր հանդիպումներում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,
  է) տվյալ առաջնությունում ունի ավելի քիչ կարմիր քարտ,
  ը) տվյալ առաջնությունում ունի ավելի քիչ դեղին քարտ,
  թ) ունի «Արդար խաղ»-ի առավել բարձր ցուցանիշ,
  ժ) ընտրվել է վիճակահանությամբ։

Նույն խմբից դուրս եկած երկու թիմերը չեն կարող հանդիպել միմյանց հետ 1/2 եզրափակչում: Փլեյ-օֆֆ փուլի 1/2 եզրափակչի զույգերը ընտրվում են վիճակահանությամբ:

10.08 Չորս խմբի դեպքում խմբերի հաղթող թիմերը անցնում են Փլեյ-օֆֆ փուլ: Փլեյ-օֆֆ փուլը սկսում է 1/2 եզրափակիչից, որին մասնակցում են 1-ին տեղը գրաված թիմերը: Փլեյ-օֆֆ փուլի 1/2 եզրափակչի զույգերը ընտրվում են վիճակահանությամբ:

10.09 1/2 եզրափակիչ հանդիպումները կանցկացվեն մեկ խաղով: Մարզադաշտի ընտրությունը կատարում է ՀՖՖ-ն՝ չեզոք մարզադաշտում: Կիսազրափակիչ խաղերում դաշտի տիրոջ կարգավիճակը որոշվում է վիճակահանությամբ և դաշտի տեր համարվող ակումբն ունենում է այն իրավունքները, որոնք վերապահված են դաշտի տեր թիմին՝ սույն կանոնակարգի դրույթներին համապատասխան:

10.10 1/2 եզրափակչի զույգերի հաղթող թիմերը հանդիպում են եզրափակչում միմյանց հետ առաջնության հաղթողին որոշելու համար:

10.11 1/2 եզրափակիչ խաղի արդյունքում և եզրափակիչ հանդիպումների հավասար արդյունքի դեպքում նշանակվում է հետխաղյա 11-մետրանոց հարվածաշար՝ համաձայն ԻՖԱԲ «Ֆուտբոլ խաղի» կանոնների:

10.12 Եզրափակիչ խաղի մարզադաշտի ընտրությունը կատարում է ՀՖՖ-ն՝ չեզոք մարզադաշտում: Եզրափակիչ խաղում դաշտի տիրոջ կարգավիճակը որոշվում վիճակահանությամբ և դաշտի տեր համարվող ակումբն ունենում է այն իրավունքները, որոնք վերապահված են դաշտի տեր թիմին՝ սույն կանոնակարգի դրույթներին համապատասխան:

10.13 Առաջնության խմբային փուլի ավարտից հետո ֆուտբոլիստների և անձնակազմի ստացած դեղին քարտերը չեղարկվում են, որակազրկումները մնում են ուժի մեջ:

10.14 Կիսաեզրափակիչ փուլի խաղերում զգուշացում (դեղին քարտ) ստանալը ֆուտբոլիստի/պաշտոնյայի համար առաջացնում է որակազրկում եզրափակիչ խաղի մասնակցությունից:

10.15 Կիսաեզրափակիչ փուլում խաղին չներկայանալու դեպքում թիմը հեռացվում է առաջնությունից:

10.16 Մ-15 և Մ-13 տարեկանների առաջնություններն անցկացվում են շրջանաձև՝ մինչև 4 թիմի դեպքում՝ վեց շրջանով, մինչև 6 թիմի դեպքում՝ չորս շրջանով, մինչև 8 թիմի դեպքում՝ երեք շրջանով, 9 և ավել թիմերի դեպքում՝ երկու շրջանով: Թիմերն առաջին և երկրորդ շրջաններում հանդիպումներն անցկացնում են սեփական և մրցակցի հարկի տակ, երրորդ և չորրորդ շրջաններում խաղերն անցկացվում են համապատասխանաբար առաջին և երկրորդ շրջանների վիճակահանության արդյունքների համաձայն:

10.17 Մ-11 տարեկանների առաջնությունը անցկացվում է շրջանաձև՝ մինչև 6 թիմի դեպքում՝ չորս շրջանով, 7 և ավել թիմերի դեպքում՝ երկու շրջանով: Թիմերն առաջին և երկրորդ շրջաններում հանդիպումներն անցկացնում են սեփական և մրցակցի հարկի տակ, երրորդ և չորրորդ շրջաններում խաղերն անցկացվում են համապատասխանաբար առաջին և երկրորդ շրջանների վիճակահանության արդյունքների համաձայն:

10.18 Մ-11 տարիքային խմբի առաջնության մասնակից թիմերի խաղերը կրում են ընկերական բնույթ, երեխաները խաղում են զվարճանքի համար, և ՀՖՖ-ն չի կազմում մրցաշարային աղյուսակ, հետևաբար տվյալ տարիքային առաջնությունների խաղերում չի գրանցում խփած և բաց թողած գնդակների տարբերությունը:

10.19 Մ-13 տարիքային խմբերի առաջնությունների հանդիպումների յուրաքանչյուր խաղակեսի 15-րդ րոպեին մրցավարը պետք է հայտարարի մինչև 2 րոպե տևողությամբ ընդմիջում:

10.20 Մ-11 տարիքային խմբերի առաջնությունների հանդիպումների յուրաքանչյուր խաղակեսի 10-րդ րոպեին մրցավարը պետք է հայտարարի մինչև 2 րոպե տևողությամբ ընդմիջում:

10.21 Բոլոր տարիքային առաջնություններում մասնակցության իրավունք ունի յուրաքանչյուր ակումբից առավելագույնը չորս թիմ:

10.22 Մ-13 և Մ-11 աղջիկների մանկապատանեկան առաջնությունները անցկացվում են փոքրացված խաղադաշտերում՝

- **Երկարությունը՝**
  Մ-13՝ 55-65մ, Մ-11՝ 40մ
- **Լայնությունը՝**
  Մ-13՝ 35-50մ, Մ-11՝ 20մ
- **Դարպասի չափերը՝**
  Մ-13՝ 5մ լայնություն, 2մ բարձրություն,
  Մ-11՝ 3մ լայնություն և 2մ բարձրություն
- **Տուգանային հրապարակը՝**
  Մ-13՝ 9մ, Մ-11՝ 7մ
- **Ազատ հարվածի, տուգանային հարվածի հեռավորությունը՝**
  Մ-13՝ 7 մ, Մ-11՝ 5 մ
- **11-մետրանոց նշակետը՝**
  Մ-13 և Մ-11՝ 11-մետրանոց նշակետը փոխարինվում է 7-մետրանոց նշակետով
- **Խաղացողների քանակը՝**
  Մ-15՝ 11 v 11, Մ-13՝ 8 v 8, Մ-11՝ 6 v 6

10.23 Մ-15 տարիքային խմբի առաջնության հանդիպումներն անցկացվում են N 5 գնդակով:

10.24 Մ-13 և Մ-11 տարիքային խմբերի առաջնությունների հանդիպումներն անցկացվում են N 4 գնդակով:

10.25 Խաղերի ժամանակ դարպասացանցերը պարտադիր են:

Հոդված 11. Խաղի անցկացման կարգը

11.01 Սույն կանոնակարգով սահմանված աղջիկների մանկապատանեկան մրցումների շրջանակներում հանդիպումներն անցկացվում են համաձայն ԻՖԱԲ «Ֆուտբոլ խաղի» կանոնների և սույն կանոնակարգի:

11.02 Մ-13 և Մ-11 տարիքային խմբերի առաջնություններում տուգանային, ազատ և անկյունային հարվածների ժամանակ մրցակից թիմի ֆուտբոլիստները պետք է

գտնվեն գնդակից նվազագույնը 5մ հեռավորության վրա: Խաղից դուրս վիճակը չի գործում: Հետադարձ փոխարինումը թույլատրվում է:

11.03 Մ-11 տարիքային խմբի առաջնությունում դարպասապահին թույլատրվում է գնդակը որսալ թիմակցի կողմից կատարված ոտքով փոխանցումից հետո:

11.04 Խաղերի տևողությունը՝

- Մ-15 – 70 րոպե (35 + 35), մինչև 15 րոպե ընդմիջումով,
- Մ-13 – 50 րոպե (25 + 25), մինչև 5 րոպե ընդմիջումով,
- Մ-11 – 40 րոպե (20 + 20), մինչև 5 րոպե ընդմիջումով:

11.05 Խաղի սպասարկումն իրականացնում են ՀՖՖ-ի կողմից նշանակված մրցավարները:

11.06 ՀՖՖ-ի կողմից մրցումների շրջանակներում խաղերի ժամանակ առաջարկվող կամ կազմակերպվող մեկ րոպե լռության արարողության, ինչպես նաև բոլոր սոցիալական և հասարակական նշանակության, ռասիզմի դեմ պայքարի և արդար խաղի միջոցառումները ենթակա են պարտադիր կատարման ակումբների կողմից:

11.07 Մասնակից ակումբների կողմից խաղերի ժամանակ որևէ միջոցառման, այդ թվում՝ մեկ րոպե լռության արարողության կազմակերպման դեպքում նախաձեռնող ակումբը խաղից նվազագույնը 2 օր առաջ պետք է գրավոր կերպով դիմի ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժնին՝ անհրաժեշտ գրավոր համաձայնություն ստանալու նպատակով: Համապատասխան միջոցառումն անցկացնելու համար գրավոր կերպով չդիմելու և գրավոր կերպով համաձայնություն չստանալու դեպքում տվյալ միջոցառման անցկացումը կարող է արգելվել ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժնի կողմից: Նախապես չնախատեսված առաջարկությունների դեպքում նախաձեռնող ակումբը խաղից նվազագույնը մեկ ժամ առաջ պետք է դիմի տվյալ խաղի մրցավարին՝ բանավոր համաձայնություն ստանալու նպատակով: Այդ դեպքում մրցավարը պարտավոր է նախապես քննարկել ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժնի հետ և համաձայնության առկայության դեպքում միջոցառման անցկացման վերաբերյալ տալ բանավոր թույլտվություն: Եթե նախաձեռնող ակումբը խաղից նվազագույնը 1 ժամ առաջ չի դիմել խաղի մրցավարին, ապա դրանից հետո դիմելու դեպքում նախաձեռնող ակումբը չի կարող ստանալ միջոցառման անցկացման համաձայնություն:

11.08 Ցանկացած պարագայում միջոցառումների անցկացման իրավունքը պատկանում է ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժնին:

11.09 Բոլոր դեպքերում կազմակերպվող միջոցառումները և արարողությունները չպետք է ազդեն խաղի մեկնարկային ժամի վրա:

Հոդված 12. Մրցաշարային աղյուսակում թիմերի դասակարգումը

12.01 Առաջնություններում թիմերը մրցաշարային աղյուսակում դասակարգվում են ըստ վաստակած միավորների: Յուրաքանչյուր խաղի արդյունքում գրանցված հաղթանակի համար թիմին շնորհվում է 3 միավոր, ոչ-ոքիի համար՝ 1 միավոր, իսկ պարտության դեպքում միավոր չի շնորհվում:

12.02 Մրցաշարային աղյուսակում երկու և ավելի թիմերի միավորների հավասարության դեպքում թիմերի դասակարգման ժամանակ առավելությունն՝ ըստ ստորև նշված հերթականության, տրվում է այն թիմին, որը՝

ա) հավակնորդ թիմերի միջև խաղերում վաստակել է ավելի շատ միավոր,
բ) հավակնորդ թիմերի միջև խաղերում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,
գ) հավակնորդ թիմերի միջև խաղերում խփել է ավելի շատ գոլ,
դ) տվյալ առաջնության բոլոր հանդիպումներում ունի ավելի շատ հաղթանակ
ե) տվյալ առաջնության բոլոր հանդիպումներում խփել է ավելի շատ գոլ,
զ) տվյալ առաջնության բոլոր հանդիպումներում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,
է) տվյալ առաջնությունում ունի ավելի քիչ կարմիր քարտ,
ը) տվյալ առաջնությունում ունի ավելի քիչ դեղին քարտ,
թ) ունի «Արդար խաղ»-ի առավել բարձր ցուցանիշ,
ժ) ընտրվել է վիճակահանությամբ:

Հոդված 13. Խաղացանկը և անցկացման ժամկետները

13.01 Մրցումների խաղացանկերը կազմվում են Բերգերի համակարգով և հաստատվում են ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժնի կողմից: Խաղաշրջանի սկսելուց առնվազն 10 օր առաջ ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժինը հաստատում է սույն կանոնակարգով սահմանված մրցումների մրցափուլերի օրերը, որոնք կարող են փոփոխվել միայն ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժնի որոշմամբ:

13.02 Մրցափուլերի օրերի հիման վրա ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժինը խաղաշրջանի մեկնարկից առնվազն 7 օր առաջ նշանակում է առաջին և երկրորդ մրցափուլերի խաղերի օրերը, ժամերը և մարզադաշտերը, այնուհետև հաջորդող բոլոր մրցափուլերի մեկնարկից առնվազն 7 օր առաջ՝ այդ մրցափուլերի խաղերի օրերը, ժամերը և մարզադաշտերը, ինչի վերաբերյալ տեղեկատվությունը շրջաբերականով ուղարկվում է մասնակից ակումբների պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեներին և տեղադրվում է Ֆուտբոլի կառավարման համակարգում:

13.03 Թիմերի մեկնարկային դիրքը մրցաշարային աղյուսակում որոշվում է վիճակահանությամբ: Վիճակահանությունը կազմակերպվում է ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժնի կողմից և անցկացվում է մրցաշրջանը սկսելուց առնվազն 11 օր առաջ՝ բացառությամբ ֆորսմաժորային իրավիճակների: Վիճակահանության կազմակերպման վերաբերյալ մանրամասները սահմանվում են ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժնի կողմից և վիճակահանությունից առնվազն երկու օր առաջ շրջաբերականով ուղարկվում մասնակից ակումբներին: Վերջիններս իրավունք ունեն մասնակցելու վիճակահանությանը: Շրջաբերականում նշվում է նաև վիճակահանության անցկացման տեղը, օրը և ժամը:

13.04 Այն թիմերը, որոնք խաղն անցկացնելու ժամանակահատվածում չորս և ավելի խաղացողներ են գործուղել ՀՀ հավաքականներ, հանդիպումները հետաձգելու համար կարող են խաղացանկով նախատեսված օրից ոչ ուշ քան երկու աշխատանքային օր առաջ գրավոր դիմել ՀՖՖ:

13.05 Հաստատված խաղացանկում փոփոխությունները կատարվում են միայն ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժնի որոշմամբ՝ տվյալ խաղին մրցող երկու ակումբների գրությունների հիման վրա, որը պետք է ներկայացվի նվազագույնը 3 աշխատանքային օր առաջ: Յուրաքանչյուր դեպքում վերջնական որոշումը կայացնում է ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժինը՝ ելնելով փոփոխության նպատակահարմարությունից:

13.06 Աղջիկների մանկապատանեկան առաջնությունների անցկացման ժամանակահատվածը ընդգրկում է 2026 թվականի սեպտեմբերի 5-ից մինչև 2027 թվականի հունիսի 30-ը:

13.07 Առաջնությունների անցկացման ժամկետները կարող են փոփոխվել ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժնի կողմից ֆորսմաժորային իրավիճակների դեպքում:

13.08 Մրցումների խաղացանկը ՀՖՖ սեփականությունն է: Ակումբները կարող են խաղացանկն օգտագործել գովազդային, կոմերցիոն և այլ նպատակներով՝ առանց երրորդ անձանց վերոնշյալ իրավասության փոխանցման:

Առաջնության խաղացանկի օգտագործումը երրորդ անձանց կողմից (բացառությամբ ակումբերի) հնարավոր է միայն ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժնին գրավոր կերպով դիմելու և վերջինիս կողմից գրավոր կերպով համաձայնություն ստանալու դեպքում:

Հոդված 14. Չկայացած և անավարտ խաղերը

14.01 Չկայացած կամ անավարտ են համարվում այն խաղերը, որոնք համապասխանաբար չեն կայացել կամ ընդհատվել են և չեն շարունակվել հետևյալ պատճառներից որևէ մեկի հիմքով՝

ա) եղանակային անբարենպաստ պայմանների,

բ) ֆորսմաժորային իրավիճակի,

գ) լուսավորման համակարգի խափանման, որը տեղի է ունեցել անկախ դաշտի տեր ակումբի կամքից, և որը հնարավոր չի եղել վերականգնել 60 րոպեի ընթացքում,

դ) թիմի (թիմերի) խաղադաշտը լքելու,

ե) երրորդ անձանց միջամտության դեպքում, որն անհնար է դարձնում խաղի հետագա բնականոն ընթացքը և/կամ ազդում է խաղի արդյունքի վրա,

զ) թիմի ֆուտբոլիստի, անձնակազմի և/կամ երկրպագուի անկարգապահ վարքագծի, որն անհնար է դարձնում խաղի հետագա բնականոն ընթացքը և/կամ ազդում է խաղի արդյունքի վրա,

է) հասարակական կարգի այնպիսի խախտման դեպքում, որն անհնար է դարձնում խաղի հետագա բնականոն ընթացքը և/կամ ազդում է խաղի արդյունքի վրա,

ը) Մ-15 տ. և Մ-13տ. առաջնություններում թիմի կազմում խաղադաշտում 7-ից պակաս ֆուտբոլիստների առկայության, ինչպես նաև Մ-11տ. առաջնությունում 5-ից պակաս ֆուտբոլիստների առկայության,
թ) անկանխատեսելի հանգամանքի, որն անհնար է դարձնում խաղի մեկնարկը, դրա ընթացքը և/կամ շարունակությունը կամ ազդում է խաղի արդյունքի վրա:

14.02 Խաղը չկայացած կամ անավարտ համարելու մասին որոշումը կայացնում է խաղի մրցավարը:

14.03 Եթե խաղը չի կայացել կամ ընդհատվել ու չի շարունակվել սույն հոդվածի 14.01 մասի «ա», «բ» կամ «գ» կետերի հիմքով՝ անկախ ակումբների կամքից, ապա այն տեղի է ունենում կամ շարունակվում է հաջորդ օրը նույն մարզադաշտում՝ խաղի ընդհատման րոպեին հաջորդող րոպեից: Եթե հանդիպումը չի կարող նշանակվել հաջորդ օրը, ապա ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժինը նշանակում է հանդիպումը մեկ այլ օր կամ օրացուցային պահեստային օր:

14.04 Տեղափոխված հանդիպման անցկացման վայրը մնում է անփոփոխ: Եթե որոշակի հանգամանքներով պայմանավորված հնարավոր չէ խաղն անցկացնել նախանշված վայրում, ապա ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժինը պետք է հանդիպումը վերանշանակի մեկ այլ խաղադաշտում:

14.05 Ֆորսմաժորային իրավիճակներում և որոշ բացառություն կազմող դեպքերում, որոնց առկայության պարագայում վտանգվում է հանդիպման անցկացումը կամ հետագա ընթացքը, դաշտի տեր ակումբը պարտավոր է ապահովել պահեստային մարզադաշտով, որը խաղաշրջանի մեկնարկից առաջ պետք է ընդունված լինի ՀՖՖ արտոնագրման բաժնի կողմից: ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժինը կարող է կիրառել բացառություններ պահեստային մարզադաշտերի՝ ՀՀ ենթակառուցվածքային կանոնակարգի պահանջներին համապատասխանելիության հարցում:

14.06 Եթե մրցավարը որոշել է կանգնեցնել խաղը, ապա մնացած խաղաժամանակը պետք է անցկացվի հետևյալ պայմաններում՝

14.06.01 խաղի արձանագրությունում պետք է լինեն միայն խաղացողները և թիմերի անձնակազմերը, որոնք հանդիպման դադարեցման պահին գտնվել են խաղադաշտում և/կամ պահեստայինների նստարանին: Բացառություն են

կազմում այն խաղացողները և անձնակազմի անդամները, որոնք հանդիպման դադարեցման պահին փոխարինվել են կամ հեռացվել: Հանդիպման դադարեցման պահին խաղադաշտում գտնված խաղացողները չպետք է նշվեն արձանագրության մեջ որպես պահեստային խաղացող, երբ հանդիպումը վերսկսվի,

14.06.02 բոլոր կարգապահական տույժերն ու պատժամիջոցները, որոնք եղել են մինչ հանդիպման դադարեցումը, մնում են անփոփոխ,

14.06.03 բոլոր զգուշացումները, որոնք տրվել են մինչ հանդիպման դադարեցումը, չեն հաշվարկվում, քանի դեռ հանդիպումն ամբողջությամբ չի ավարտել,

14.06.04 մինչև խաղի դադարեցումը հեռացված ֆուտբոլիստ(ներ)ը չեն կարող փոխարինվել մնացած խաղաժամանակում, և մեկնարկային կազմի խաղացողների քանակը մնում է նույնը, ինչ մինչև խաղի դադարեցվելը,

14.06.05 անավարտ հանդիպման դադարի ժամը, դադարեցնելու պատճառը, կայացրած կարգապահական տույժերը և հանդիպման խաղացված հատվածի հաշիվը պետք է արտացոլվեն արձանագրության թղթային տարբերակում, եթե այդպիսին օգտագործվում է, ինչպես նաև մրցավարի հաշվետվության մեջ: Հանդիպման խաղացված հատվածի հաշիվը և կարգապահական տույժերը հանդիպման վերսկսումից հետո պահպանվում են:

14.07 Եթե անավարտ խաղին մասնակցած ֆուտբոլիստ(ներ)ը առողջական խնդիրների պատճառով չի/չեն կարող մասնակցել խաղի շարունակությանը, իսկ թիմի՝ փոխարինումներ կատարելու հնարավորությունները սպառվել են, ապա ֆուտբոլիստ(ներ)ը կարող է/են փոխարինվել տվյալ խաղի արձանագրությունում նշված այլ այնպիսի ֆուտբոլիստ(ներ)ով, որը(ոնք) ընդհատված խաղին չի/չեն մասնակցել: Եթե տվյալ խաղի արձանագրությունում պահեստային ֆուտբոլիստներ չկան, ապա տվյալ թիմը խաղին մասնակցում է համապատասխան քանակի ֆուտբոլիստներով:

Նշված առողջական խնդիրների մասին ակումբը խաղի շարունակության մեկնարկից առնվազն մեկ ժամ առաջ հայտնում է խաղի մրցավարին՝ նրան փոխանցելով թիմի գլխավոր մարզչի և ակումբի բժշկի կողմից ստորագրված

տեղեկանք, ինպես նաև ՀՖՖ բժշկական ծառայության պահանջով ակումբը պարտավոր է ներկայացնել որևէ բժշկական հաստատության կողմից ներկայացված տեղեկանք տվյալ առողջական խնդրի մասին:

14.08 Սույն հոդվածի 14.01 մասի «դ»-ից «թ» կետերով ամրագրված հիմքերով՝ խաղն ընդհատվելու պարագայում այն չի շարունակվում և չկայանալու պարագայում չի վերախաղարկվում:

14.09 Սույն հոդվածի 14.01 մասի «դ»-ից «թ» կետերով ամրագրված հիմքերով՝ խաղն ընդհատվելու կամ չկայանալու դեպքում մեղավոր թիմի հաշվին գրանցվում է տեխնիկական պարտություն 0:3 հաշվով, իսկ մրցակցի հաշվին՝ տեխնիկական հաղթանակ 3:0 հաշվով: Եթե խաղն ընդհատվել կամ չի կայացել երկու թիմերի մեղավորության կամ դիտավորության պատճառով, ապա երկու թիմերին գրանցվում է տեխնիկական պարտություն 0:3 հաշվով: ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեն իրավասու է սահմանել այլ պատասխանատվության միջոցներ ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի շրջանակներում:

14.10 Եթե թիմերի ֆուտբոլիստների կողմից դրսևորվել է այնպիսի անվայել վարքագիծ, որն անհնար է դարձրել խաղի մեկնարկը կամ շարունակությունը, ապա խաղը համարվում է կայացած, բայց թիմերի հաշվին միավոր չի գրանցվում:

14.11 Եթե խաղի արդյունքը չեղյալ է համարվել, ապա խաղի ընթացքում գրանցված գոլերը ռմբարկուների հաշվարկում չեն ներառվում, իսկ կարգապահական բոլոր տույժերը, ինչպես նաև դեղին և կարմիր քարտերը մնում են ուժի մեջ:

14.12 Չկայացած կամ անավարտ խաղերը, որտեղ որևէ թիմի հաշվին գրանցվել է տեխնիկական պարտություն, չեն կարող հաշվարկվել որպես որակազրկումը մարելու միջոց: Բացառությամբ՝ եթե տվյալ հանդիպումը չի կայացել կամ անավարտ է մնացել ոչ տվյալ թիմի մեղքով:

14.13 Ֆուտբոլիստների և թիմի անձնակազմի որակազրկումները գործում են մինչև վերջիններիս կողմից բաց թողնվելիք խաղի, իսկ մեկից ավել խաղերի պարագայում՝ մինչև վերջին խաղի ավարտը ներառյալ: Որակազրկված ֆուտբոլիստը կամ անձնակազմի անդամն իրավունք ունի մասնակցելու տվյալ խաղին, եթե բաց

թողնվելիք վերջին խաղը տվյալ խաղի մեկնարկից առնվազն 60 րոպե առաջ ամբողջությամբ ավարտվել է:

14.14 Անավարտ կամ չկայացած խաղի ընդհատվելու կամ չկայանալու պատճառը, ժամանակը և հաշիվը գրանցվում են տվյալ խաղի արձանագրության մեջ:

14.15 Սույն հոդվածի 14.01 մասում նշված որևէ հիմքով ընդհատված (բացառությամբ 14.01 մասի «գ» կետի), սակայն 30 րոպեի ընթացքում վերսկսած և բնականոն ընթացքով շարունակված խաղն անավարտ խաղ չի համարվում: Այդ խաղը վերսկսվում է ընդհատման րոպեին հաջորդող րոպեից, և խաղի շարունակության ժամանակ գործում են այն բոլոր կարգավորումները և կանոնները, որոնք կգործեին չընդհատված խաղի դեպքում: Այդ խաղի արձանագրությունում նշում է կատարվում խաղի ընդհատման պատճառի, ընդհատման և վերսկսման ժամերի, ինչպես նաև մրցավարի կողմից կարևոր համարվող այլ հանգամանքների մասին:

Հոդված 15. Թիմերի չներկայանալը խաղին, առաջնություններին մասնակցությունից հրաժարվելը կամ առաջնություններից հեռացվելը

15.01 Մ-15 տարեկանների առաջնության մասնակից թիմերը պարտավոր են ժամանել մարզադաշտ խաղի նշանակված ժամից նվազագույնը 40 րոպե առաջ, Մ-13 և Մ-11 առաջնությունների թիմերը նվազագույնը 30 րոպե առաջ:

15.02 Եթե թիմն ուշանում է մարզադաշտ ժամանելու համար սահմանված ժամանակից, ապա պարտավոր է այդ մասին նախապես հայտնել մրցավարին:

15.03 Եթե Մ-15 տարեկանների առաջնության մասնակից թիմը խաղասկզբից 40 րոպե առաջ մարզադաշտ չի ժամանել ու ուշացման պատճառների մասին խաղի մրցավարին չի տեղեկացրել, ապա համարվում է խաղին չներկայացած: Խաղի մրցավարը պարտավոր է արձանագրել տվյալ փաստը այդ խաղի արձանագրությունում և ներկայացնել ՀՖՖ:

15.04 Եթե Մ-13 և Մ-11 տարեկանների առաջնությունների մասնակից թիմերը խաղասկզբից 30 րոպե առաջ մարզադաշտ չեն ժամանել ու ուշացման պատճառների մասին խաղի մրցավարին չեն տեղեկացրել, ապա համարվում է խաղին չներկայացած: Խաղի մրցավարը պարտավոր է արձանագրել տվյալ փաստը այդ խաղի արձանագրությունում և ներկայացնել ՀՖՖ:

15.05 Եթե սահմանված ժամկետում թիմը տեղեկացնում է խաղից ուշանալու մասին, ապա մրցավարը, խորհրդակցելով ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժնի հետ, կարող է որոշում կայացնել խաղասկիզբը Մ-15 տարեկանների առաջնության պարագայում առավելագույնը 40 րոպեով, Մ-13 և Մ-11 առաջնություններում առավելագույնը 30 րոպեով հետաձգելու մասին

15.06 Սույն կանոնակարգի դրույթները պարբերաբար խախտելու, ՀՖՖ-ի որոշումները չկատարելու և իր գործողություններով կամ անգործությամբ ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի հիմնարար սկզբունքները ոտնահարելու դեպքում թիմը ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշմամբ ՀՖՖ-ի կարգապահական և էթիկայի կանոնակարգով սահմանված կարգով կարող է հեռացվել տվյալ առաջնությունից:

15.07 Եթե ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի կողմից տվյալ առաջնությունից հեռացված թիմը մասնակցել է 50% կամ պակաս խաղերի, ապա այդ խաղերի արդյունքները չեղյալ են համարվում, և տվյալ թիմի ու մրցակից թիմերի կողմից այդ խաղերում վաստակած միավորները, խփած և բաց թողած գնդակները, ինչպես նաև դեղին և կարմիր քարտերը զրոյացվում են՝ բացառությամբ ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշմամբ սահմանված որակազրկումների: Եթե թիմը մասնակցել է տվյալ առաջնության 50%-ից ավել խաղերի, ապա այդ խաղերում վաստակած միավորները, խփած և բաց թողած գնդակները, ինչպես նաև դեղին և կարմիր քարտերը մնում են ուժի մեջ, բայց տվյալ թիմը հեռացվում է առաջնությունից: Այն թիմերի օգտին, որոնք տվյալ առաջնության մնացած հատվածում հանդիպելու էին հեռացված թիմի հետ, մնացած բոլոր խաղերում գրանցվում է տեխնիկական հաղթանակ 3:0 հաշվով:

15.08 Եթե առաջնության ընթացքում որևէ թիմ հեռանում է տվյալ առաջնությունից, ապա զրոյացվում են խաղերում դեմ թիմի ֆուտբոլիստների ստացած դեղին քարտ(եր)ը:

15.09 Սույն հոդվածի 15.08 մասի դեղին քարտերի զրոյացվելու դեպքում եթե առաջնությունում դեղին քարտ(եր)ը դեմ թիմի ֆուտբոլիստ է ստացել, որի

արդյունքում նաև բաց է թողել սահմանված քանակի խաղ մինչև հեռացվող թիմի դուրս գալը, ապա դեմ թիմի ֆուտբոլիստը չպետք է բաց թողնի խաղ, եթե հեռացված թիմի քարտերը զրոյացնելուց հետո հաջորդ խաղերին կրկին կուտակի նույն քանակի դեղին քարտեր:

Հոդված 16. Վիճարկումը

16.01 Ակումբները իրավունք ունեն ներկայացնելու վիճարկումներ ՀՖՖ մրցավարական և տեսչական կոմիտե:

16.02 Խախտման վիճարկումը գրանցելու համար ակումբի լիազորված անձը խաղից առավելագույնը 30 րոպե հետո պետք է պաշտոնապես դիմի խաղի մրցավարին և լրացնի խաղի արձանագրության համապատասխան բաժինը՝ ներկայացնելով վիճարկման հիմքերը, այն է՝ որ խախտումն է վիճարկվում և ում կողմից է այն կատարվել:

16.03 Սույն հոդվածի 16.02 մասով սահմանված կարգով վիճարկումը գրանցելուց հետո ակումբը 24 ժամվա ընթացքում ՀՖՖ պաշտոնական էլեկտրոնային հասցեին է ներկայացնում տվյալ խախտման վերաբերյալ հիմնական վիճարկումը և վիճարկման տուրքի (այսուհետ՝ Տուրք) վճարումը հավաստող ապացույցը:

16.04 Տուրքը յուրաքանչյուր վիճարկվող խախտման համար կազմում է 15,000 ՀՀ դրամ, որը վճարվում է հաշվեհամարին՝ անկանխիկ վճարում կատարելու միջոցով:

16.05 Սույն հոդվածի 16.02 և/կամ 16.03 մասերին չհամապատասխանող վիճարկման դիմումը թողնվում է առանց քննության:

16.06 Վիճարկումը քննարկվում է ՀՖՖ մրցավարական և տեսչական կոմիտեի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով վիճարկումը և տուրքի վճարումը կատարված լինելը հավաստող ապացույցը ստանալու պահից 7 օրվա ընթացքում: Վիճարկման քննության արդյունքում կայացվում է որոշում, որն էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվում է վիճարկումը ներկայացրած և մրցակից ակումբներին:

16.07 Մրցավարական և տեսչական կոմիտեի կողմից կայացված որոշումները ենթակա չեն բողոքարկման ՀՖՖ կարգապահական մարմիններ՝ բացառությամբ 15.09 կետում նշված դեպքերի:

16.08 Վճարված տուրքը վերադարձվում է վիճարկումը ներկայացրած ակումբին միայն այն դեպքում, երբ վիճարկումը բավարարվում է, մնացած բոլոր դեպքերում տուրքը ենթակա չէ վերադարձման:

16.09 Մրցավարի կողմից խաղադաշտում կայացած որոշումները վերջնական են և ենթակա չեն վիճարկման ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտե՝ բացառությամբ, երբ՝

ա) ֆուտբոլիստին սխալմամբ դեղին քարտ է ցույց տրվել մեկ այլ ֆուտբոլիստի փոխարեն,

բ) ֆուտբոլիստը սխալմամբ հեռացվել է մեկ այլ ֆուտբոլիստի փոխարեն,

գ) ֆուտբոլիստը չի հեռացվել երկրորդ դեղին քարտ ստանալուց հետո:

16.09 կետում նշված դեպքերի վերաբերյալ ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեն կարող է որոշում կայացնել բացառապես ՀՖՖ մրցավարական և տեսչական կոմիտեի կողմից տրված հիմնավոր եզրակացության հիման վրա: Նշված դեպքերում ՀՖՖ մրցավարական և տեսչական կոմիտեն պարտավոր է վիճարկումը ստանալուց հետո 48 ժամվա ընթացքում ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեին տրամադրել համապատասխան եզրակացությունը:

ԳԼՈՒԽ 3: ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

Հոդված 17. Սպասարկող անձնակազմի նշանակումը

17.01 Հանդիպումը սպասարկող մրցավարական անձնակազմը և տեսուչը նշանակվում են ՀՖՖ մրցավարական և տեսչական դեպարտամենտի կողմից:

17.02 Ակումբների կամ այլ կազմակերպությունների պահանջով կամ խնդրանքով սպասարկող անձնակազմի կամ վերջինիս առանձին անդամների նշանակում կամ փոխարինում չի կատարվում:

17.03 Հանդիպումը սպասարկող մրցավարական անձնակազմը նշանակվում է ՀՖՖ մրցավարական և տեսչական դեպարտամենտի կողմից հետևյալ կազմով՝

- Մ-15տ. խաղերին՝ 3 մրցավար,
- Մ-13տ. խաղերին՝ 1 մրցավար,
- Մ-11տ. խաղերին՝ 1 մրցավար:

Հոդված 18. Սպասարկման իրականացումը

18.01 Աղջիկների մանկապատանեկան առաջնությունների խաղերը կազմակերպելու և սպասարկելու համար ՀՖՖ-ն յուրաքանչյուր խաղից առաջ նշանակում է սպասարկող անձնակազմ հետևյալ կազմով՝

- Մրցավար և / կամ մրցավարի երկու օգնական:

18.02 Խաղերի սպասարկումն իրականացվում է համաձայն ԻՖԱԲ-ի կողմից ընդունված «Ֆուտբոլ խաղի կանոններ»-ի, ինչպես նաև ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի՝ պաշտոնական խաղերի անցկացումը կարգավորող այլ փաստաթղթերի:

18.03 Մրցավարների և տեսուչների իրավունքները և պարտականությունները սահմանվում են ԻՖԱԲ «Ֆուտբոլ խաղի կանոններ»-ի, սույն կանոնակարգի դրույթների, մրցավարությունն ու տեսչությունը կանոնակարգող ՀՖՖ այլ փաստաթղթերի համաձայն:

Հոդված 19. Սպասարկող անձնակազմի անդամների գործառույթները

19.01 Սպասարկող անձնակազմի բոլոր անդամներին արգելվում է խաղին մեկնել և/կամ վերադառնալ տվյալ խաղի մասնակից ակումբներից որևէ մեկի հետ, և/կամ իջևանել միասին՝ բացառապես ֆորսմաժորային իրավիճակների:

19.02 Խաղասկզբից ոչ ուշ, քան 30 րոպե առաջ, մրցավարական անձնակազմը ստուգում է մասնակից թիմերի կողմից Ֆուտբոլի կառավարման համակարգում և թղթային արձանագրությունում, եթե այդպիսին օգտագործվում է, տրամադրված խաղացողների ցուցակները, որոնց համապատասխանելիության համար պատասխանատու են դրանք ներկայացնող ակումբները:

19.03 Նախախաղային խորհրդակցությունից առաջ մրցավարը ստուգում է խաղադաշտի որակը և մարզադաշտի համապատասխանելիությունը սահմանված չափանիշներին:

19.04 Սպասարկող անձնակազմը պարտավոր է ձեռնարկել խաղն անցկացնելուն ուղղված բոլոր հնարավոր և ողջամիտ քայլերը:

19.05 Մրցավարները խաղասկզբից առնվազն 5 րոպե առաջ պետք է ստուգեն թիմերի մեկնարկային կազմերի ֆուտբոլիստների, ինչպես նաև խաղի ընթացքում փոխարինվող ֆուտբոլիստների ինքնությունը ֆուտբոլիստների ՀՖՖ նույնականացման քարտերի միջոցով:

Հոդված 20. Սպասարկող անձնակազմի վարձատրությունը

20.01 Մրցավարների և տեսուչների աշխատանքի և գործուղման վարձատրությունը կատարում է ՀՖՖ-ն:

20.02 Չկայացած և անավարտ խաղերի տեսուչի և մրցավարների աշխատանքի և գործուղման վարձատրությունը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

ԳԼՈՒԽ 4: ԴԱՇՏԻ ՏԵՐ ԱԿՈՒՄԲԸ

Հոդված 21. Դաշտի տեր ակումբի պարտականությունները

Դաշտի տեր ակումբը պարտավոր է՝

21.01 Առաջնության յուրաքանչյուր խաղի անցկացման համար տրամադրել առնվազն 3 գնդակ:

21.02 Տրամադրել թիմերի և մրցավարների համար նախատեսված հանդերձարան:

21.03 Արգելել կողմնակի, որակազրկված անձանց մուտքը մրցավարական հանդերձարան:

21.04 Տրամադրել նախախաղային խորհրդակցության համար նախատեսված սենյակ:

21.05 Խաղի ժամանակահատվածում մարզադաշտում և դրա հարակից տարածքներում ապահովել հասարակական կարգի պահպանում ու հանդիպման մասնակիցների անվտանգությունը՝ առնվազն ՀՀ ոստիկանության միջոցով: Անվտանգության բացակայության դեպքում խաղը կկայանա, երբ դաշտի տեր ակումբի թիմի ներկայացուցիչը անվտանգության պատասխանատվություն կրելու գրություն է գրում ու հանձնում մրցավարին:

21.06 Ապահովել բժշկական անձնակազմի ներկայությունը խաղին:

21.07 Մարզադաշտում գտնվող հանդիսատեսին դաշտի տեր ակումբը պետք է արգելի՝

ա) մարզադաշտում տեղի ունեցող մարզական միջոցառման կազմակերպիչների, մարզադաշտի սեփականատիրոջ և/կամ օրինական տիրապետողի կողմից արգելված վայրերում ծխելը,

բ) իրերի, այդ թվում՝ բանջարեղենի, մրգերի, ցանկացած տեսակի տարայով կամ առանց տարայի հեղուկի նետումը հանդիպման մասնակիցների, հանդիսատեսի, այլ անձանց, ինչպես նաև խաղադաշտի ուղղությամբ,

գ) հանդիսատեսի օգտագործման համար չնախատեսված շինություններում ու կառույցներում գտնվելը (ֆասադներ, ցանկապատեր, պատեր, արգելապատնեշներ, լուսավորության սյուներ, հեռուստատեսային տեսախցիկների պլատֆորմներ, ծառեր, տանիքներ և այլն),

դ) այնպիսի բղավոցները, վանկարկումները, երգերի կատարումը, նշանների և/կամ այլ խորհրդանիշների հասարակական ցուցադրումը, տպագիր նյութերի տարածումը, ինչպես նաև այլ այնպիսի գործողությունների կատարումը, որոնք վիրավորում են միջոցառման մասնակիցների և/կամ հանդիսատեսի արժանապատվությունը, վարկաբեկում են նրանց, կրում են ծայրահեղական բնույթ

կամ պարունակում են ռասսայական, սոցիալական, ազգային կամ ցանկացած այլ խտրական վերաբերմունք,

ե) խաղին ներկայանալ կենդանիների հետ,

զ) մարզադաշտի տարածք մտցնել ցանկացած տեսակի զենք, զինամթերք, կտրող և/կամ ծակող առարկաներ, արցունքաբեր ու նյարդային ազդեցություն ունեցող գազային բալոններ, որպես զենք օգտագործվելու ենթակա կամ հանդիսատեսների առողջությանը հավանական վնաս պատճառող այլ առարկաներ, այդ թվում՝ հովանոցներ, ծանր առարկաներ,

է) մարզադաշտի տարածք մտցնել դյուրավառ ցանկացած նյութ՝ անկախ դրա տեսակից՝ ներառյալ այն նյութերը, որոնք կարող են օգտագործվել դյուրավառ նյութերի կամ ծխի պատրաստման համար (բացառությամբ ծխախոտի, գրպանի պլաստմասե կրակայրիչի), այդ թվում՝ ծխարձակիչներ, ճայթրուկներ, ազդանշանային հրթիռներ, պայթուցիկ, թունավոր և հոտավետ նյութեր, ռադիոակտիվ նյութեր, գազի բալոններ, վառելանյութեր (բացառությամբ լուցկիների, կրակայրիչների և ծխախոտի, այդ թվում՝ էլեկտրոնային):

21.08 Սպասարկող անձնակազմին տրամադրել անհրաժեշտ քանակի գործարանային արտադրության ջուր:

ԳԼՈՒԽ 5: ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հոդված 22. Նախախաղային խորհրդակցությունը

22.01 Յուրաքանչյուր հանդիպումից առնվազն 30 րոպե առաջ մրցավարը կազմակերպում է նախախաղային խորհրդակցություն, որին մասնակցում են մրցող ակումբների ներկայացուցիչները:

22.02 Ակումբների կողմից նախախաղային խորհրդակցությանը մասնակցող անձինք մրցավարի ստուգմանն են ներկայացնում ֆուտբոլիստների և դարպասապահի խաղային մարզահագուստն ամբողջությամբ՝ մարզաշապիկ, կիսատաբատ (կամ սպորտային տաբատ՝ դարպասապահի դեպքում), կիսագուլպա և մարզումային ժիլետներ: Հիմնական հանդերձանքից բացի պետք է ներկայացնեն նաև պաշտպանիչ դիմակներ, եթե դրանք օգտագործելու են:

Հոդված 23. Առանձնահատկություններ՝ կախված եղանակային պայմաններից

23.01 Առաջնությունների շրջանակներում ըստ Ցելսիուսի -10 աստիճանից ցածր և +40 աստիճանից բարձր եղանակային պայմանների առկայության դեպքում խաղի գլխավոր մրցավարը կայացնում է որոշում խաղի անցկացման անհնարավորության վերաբերյալ:

23.02 Բնական խոտածածկով խաղադաշտերում ըստ Ցելսիուսի +32 և բարձր ջերմաստիճանի դեպքում Մ-15 տարեկանների տարիքային խմբի խաղի ժամանակ կիրառվում է երկու ջրային դադար մեկ րոպե տևողությամբ՝ խաղի 25-րդ և 70-րդ րոպեներին: Ջրային դադարի վերաբերյալ որոշումը կայացնում է խաղի մրցավարը նախախաղային խորհրդակցության ժամանակ և տեղյակ պահում բոլոր շահագրգիռ կողմերին:

23.03 Արհեստական խոտածածկով խաղադաշտերում Մ-15 տարեկանների տարիքային խմբի խաղի ժամանակ շոգ եղանակին կիրառվում է երկու ջրային դադար մեկ րոպե տևողությամբ՝ խաղի 25-րդ և 70-րդ րոպեներին: Ջրային դադարի վերաբերյալ որոշումը կայացնում է խաղի մրցավարը նախախաղային խորհրդակցության ժամանակ և տեղյակ պահում բոլոր շահագրգիռ կողմերին:

ԳԼՈՒԽ 6: ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 24. Ֆուտբոլիստների և թիմի անձնակազմի անդամների հայտավորումը և վերահայտավորումը

24.01 Մ-15 տարեկանների մասնակից յուրաքանչյուր թիմի կազմում թույլատրվում է հայտավորել նվազագույնը 14 ֆուտբոլիստ, առավելագույնը՝ 25 ֆուտբոլիստ: Մինչև 15 տարեկանների առաջնությանը իրավունք ունեն հայտավորվելու 2012-2013թթ. ծնված ֆուտբոլիստները, ինչպես նաև 2014թ. ծնված մինչև 4 ֆուտբոլիստ:

24.02 Մ-13 տարեկանների մասնակից յուրաքանչյուր թիմ կազմում թույլատրվում է հայտավորել նվազագույնը 12 ֆուտբոլիստ, առավելագույնը՝ 22 ֆուտբոլիստ: Մինչև 13 տարեկանների առաջնությանը իրավունք ունեն հայտավորվելու 2014-2015 ծնված ֆուտբոլիստները, ինչպես նաև 2016թ. ծնված մինչև 4 ֆուտբոլիստ:

24.03 Մ-11 տարեկանների մասնակից յուրաքանչյուր թիմի կազմում թույլատրվում է հայտավորել նվազագույնը 10 ֆուտբոլիստ, առավելագույնը՝ 18 ֆուտբոլիստ: Մինչև 11 տարեկանների առաջնությանը իրավունք ունեն հայտավորվելու 2016-2017թթ. ծնված ֆուտբոլիստները, ինչպես նաև 2018թ. ծնված մինչև 4 ֆուտբոլիստ:

Առաջնության անվանում	Տարիքային խումբ
Մ-15 տարեկանների առաջնություն	2012թ. և 2013թ. ծնված ֆուտբոլիստներ 2014թ. ծնված մինչև 4 ֆուտբոլիստ
Մ-13 տարեկանների առաջնություն	2014թ. և 2015թ. ծնված ֆուտբոլիստներ 2016թ. ծնված մինչև 4 ֆուտբոլիստ
Մ-11 տարեկանների առաջնություն	2016թ. և 2017թ. ծնված ֆուտբոլիստներ 2018թ. ծնված մինչև 4 ֆուտբոլիստ

24.04 Ակումբները պետք է ֆուտբոլիստներին և անձնակազմի անդամներին հայտավորեն/ վերահայտավորեն Ֆուտբոլի կառավարման համակարգի միջոցով:

24.05 Հայտավորման ենթակա ֆուտբոլիստների նվազագույն քանակը չապահովելու դեպքում ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեն կայացնում է որոշում սույն հոդվածի խախտման վերաբերյալ:

24.06 Աղջիկների մանկապատանեկան առաջնության մասնակից յուրաքանչյուր թիմի կազմում թույլատրվում է հայտավորել թիմի անձնակազմի առավելագույնը 5 անդամի: Թիմի անձնակազմի անդամներ են համարվում հետևյալ անձինք՝

ա) գլխավոր մարզիչ, ով պետք է ունենա ՈՒԵՖԱ-ի առնվազն «C» կարգի գործող մարզչական արտոնագիր կամ գործող՝ իրավասության ճանաչում ՈՒԵՖԱի կողմից (UEFA Recognition of Competence), ինչը համարժեք է ՈՒԵՖԱ-ի առնվազն «C» կարգի մարզչական արտոնագրին,

բ) գլխավոր մարզչի օգնական, ով պետք է ունենա ՈՒԵՖԱ-ի առնվազն «C» կարգի գործող մարզչական արտոնագիր կամ գործող՝ իրավասության ճանաչում ՈՒԵՖԱի կողմից (UEFA Recognition of Competence), ինչը համարժեք է ՈՒԵՖԱ-ի առնվազն «C» կարգի մարզչական արտոնագրին,

գ) դարպասապահների մարզիչ, ով պետք է ունենա ՈՒԵՖԱ-ի առնվազն «C» կարգի գործող մարզչական արտոնագիր կամ գործող՝ իրավասության ճանաչում ՈՒԵՖԱի կողմից (UEFA Recognition of Competence), ինչը համարժեք է ՈՒԵՖԱ-ի առնվազն «C» կարգի մարզչական արտոնագրին,

դ) Մասնակից ակումբները պետք է հայտավորման գործընթացի ժամանակ ներկայացնեն բժիշկ, ով ունի բարձրագույն բժշկական կրթություն, Սպորտային բժշկություն (Սպորտային բժիշկ) մասնագիտացում և որակավորում (սույն հատվածը անհրաժեշտ է իրականացնել կանոնակարգի հաստատումից հետո 6 ամսյա ժամկետում) կամ առողջապահության բնագավառի մասնագիտական գործունեության բժշկական հիմնական ներքոնշյալ մասնագիտություններից մեկի և սպորտային բժշկություն (սպորտային բժիշկ) նեղ մասնագիտացման միաժամանակյա առկայություն, ինչպես նաև ավագ բուժաշխատողի համար նախատեսված ՇՄԶ հավաստագիր:

Պահանջվող առողջապահության բնագավառի մասնագիտական գործունեության բժշկական հիմնական մասնագիտությունները հետևյալն են՝

✓ Ընտանեկան բժշկություն (ընտանեկան բժիշկ),

✓ Ներքին հիվանդություններ (թերապևտ),

✓ Մանկաբուժություն (Մանկաբույժ)

✓ Մանկական ֆիզիկական և վերականգնողական բժշկություն (Մանկական վերականգնողաբան)

✓ Մանկական վնասվածքաբանություն և օրթոպեդիա այդ թվում ուռուցքաբանություն (մանկական վնասվածքաբան օրթոպեդ)

✓ Անհետաձգելի բժշկություն (անհետաձգելի օգնության բժիշկ) հիմնական մասնագիտություն:

Բուժքույր հայտավորելու դեպքում պետք է ունենա բուժքրոջ միջին մասնագիտական կրթություն, քույրական գործը կամ միջին բուժաշխատողի գործը սպորտայինբժշկությունում նվազագույնը եռամսյա վերապատրաստման կամ վերամասնագիտացման առկայություն (սույն հատվածը անհրաժեշտ է իրականացնել կանոնակարգի հաստատումից հետո 6 ամսյա ժամկետում), ՇՄԶ հավաստագիր: Միջին բուժաշխատողը կարող է սպասարկել մանկապատանեկան խաղ, եթե համապատասխանում է վերոնշյալ միջին բուժաշխատողին ներկայացված պահանջներին և ակումբը կամ մանկապատանեկան մարզադպրոցն ունի 24.06 կետի պահանջներին համապատասխան բժիշկ, ով առնվազն 15 րոպեի ընթացքում կանչի դեպքում կարող է մոտենալ և աջակցել միջին բուժաշխատողին:

ե) Մերսող/կինեզիստ/ֆիզիոթերապիստ հայտավորելու դեպքում պետք է ունենան կինեզիոլոգ կամ ֆիզիոթերապիստ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն կամ մերսողի միջին մասնագիտական կրթություն և քույրական գործը կամ միջին բուժաշխատողի գործը սպորտային բժշկությունում նվազագույնը եռամսյա վերամասնագիտացման առկայություն (սույն հատվածը անհրաժեշտ է իրականացնել կանոնակարգի հաստատումից հետո՝ վեց ամսվա ընթացքում), միայն միջին բուժաշխատողի դեպքում՝ ՇՄԶ հավաստագիր:

Այն ակումբները, որոնք չեն կարող ապահովել սույն կետում սահմանված պահանջները, պարտավոր են խաղաշրջանի մեկնարկից առնվազն 15 օր առաջ կապ հաստատել ՀՖՖ բժշկական դեպարտամենտի հետ՝ գրավոր տեղեկացնելով narek.vanesyan@ffa.am էլեկտրոնային փոստի հասցեով՝ ապահովելու համար թիմի համապատասխան անձնակազմի արտոնագրման գործընթացի իրականացումը կամ քննարկել խնդրի վերաբերյալ հնարավոր լուծումներ:

Խաղերի ընթացքում ֆորսմաժորային իրավիճակներում անհրաժեշտ է համապատասխան գրությամբ դիմել ՀՖՖ:

24.07 Աղջիկների մանկապատանեկան առաջնություններում հայտավորված թիմի անձանկազմը պետք է բաղկացած լինի առնվազն հետևյալ անդամներից՝

ա) գլխավոր մարզիչ,
դ) բժիշկ:

24.08 Թիմի անձնակազմի անդամները կարող են վերահայտավորվել առանց ժամկետային սահմանափակման:

24.09 Հայտավորման և վերահայտավորման համար ակումբները ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժնի կողմից նախապես հաստատված գրաֆիկով սահմանված ժամկետներում Ֆուտբոլի կառավարման համակարգում վերբեռնում են հայտավորվող/վերահայտավորվող յուրաքանչյուր ֆուտբոլիստի համար բուժհաստատության կողմից հաստատված տեղեկանք ֆուտբոլիստի առողջական վիճակի մասին:

24.10 Հայտավորման ժամկետը սահմանվում է պաշտոնական առաջին խաղից 12 օր առաջ և ավարտվում է 1 օր առաջ:

24.11 Եթե հայտավորումը/վերահայտավորումը չի համապատասխանում սույն հոդվածի նախատեսված պահանջներին կամ ներկայացվում սահմանված ժամկետների խախտմամբ, ապա այն մերժվում է ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժնի կողմից, որի մասին ակումբը ծանուցվում է Ֆուտբոլի կառավարման համակարգի միջոցով:

24.12 Առաջնության ընթացքում ֆուտբոլիստի կամ թիմի անձնակազմի անդամի հայտից հանելու գործընթացը կատարվում է Ֆուտբոլի կառավարման համակարգի միջոցով:

24.13 Թիմը կարող է հայտավորել կամ վերահայտավորել այն ֆուտբոլիստներին, որոնք գրանցված են տվյալ ակումբում: Ֆուտբոլիստների գրանցումը կատարվում է ՀՖՖ ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի համաձայն:

24.14 Հայտավորման ժամկետի լրանալուց հետո ֆուտբոլիստների թիմերում վերահայտավորումը կատարվում է սահմանված ժամկետներում, այն է՝ առաջնության առաջին խաղից հետո մինչև 2026թ. հոկտեմբերի 10-ը (Երևանի ժամանակով մինչև ժամը 23:59) և 20.02.2027 - 01.04.2027թթ. (Երևանի ժամանակով մինչև ժամը 23:59):

24.15 Սահմանված ժամկետներից դուրս վերահայտավորվել կարող են միայն հետևյալ ֆուտբոլիստները.

- արտասահմանից ժամանած այն ֆուտբոլիստները, որոնց միջազգային տրանսֆերային սերտիֆիկատի/տեղեկանքի/ հարցման պատասխանը ՖԻՖԱ-ի և ՀՖՖ-ի (ՖԻՖԱ-ի և «ՀՖՖ ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության») Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգով սահմանված կարգով ՀՖՖ-ն ստացել է ֆուտբոլիստների գրանցման համար սահմանված ժամանակահատվածից (տրանսֆերային պատուհանից) դուրս: Սույն դեպքում ակումբը պարտավոր է իրականացնել ֆուտբոլիստի վերահայտավորումը գրանցման օրից հետո 20 օրվա ընթացքում, եթե այլ բան չի բխում սույն կանոնակարգի և ֆուտբոլ մարզաձևը կարգավորող այլ իրավական ակտերի էությունից: Սույն մասով սահմանված ժամկետի պահանջը չպահպանելը զրկում է ակումբին տվյալ ֆուտբոլիստին վերահայտավորելու իրավունքից մինչև հաջորդ հայտավորման/վերահայտավորման համար սահմանված ժամկետը:

24.16 Մարզիչը կարող է միաժամանակ հայտավորված լինել միևնույն տարիքային առաջնության յուրաքանչյուր խմբում հանդես եկող առավելագույնը մեկ թիմի կազմում:

24.17 Խաղաշրջանի ընթացքում ֆուտբոլիստը կարող է տեղափոխվել մի ակումբից մյուսն ընդամենը մեկ անգամ:

24.18 Ֆուտբոլիստները մեկ ակումբից մյուսը կարող են տեղափոխվել՝ համաձայն ՀՖՖ ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի դրույթների:

24.19 Ֆուտբոլիստը որևէ մրցաշրջանի ընթացքում նույն ակումբի որևէ թիմում հայտավորվելու դեպքում պետք է մնա նույն թիմում առնվազն մինչև մրցաշրջանի ձմեռային դադարը:

Հոդված 25. Ֆուտբոլիստների բժշկական ստուգումը

25.01 Առաջնություններում հանդես եկող ֆուտբոլիստները պետք է անցնեն բժշկական ստուգում տարեկան մեկ անգամ՝ մինչև տվյալ խաղաշրջանում տվյալ թիմի առաջին պաշտոնական խաղը, ֆուտբոլիստների բժշկական ստուգումն ապահովում են ակումբները՝ բուժհաստատության կողմից տրված համապատասխան ստուգման

թերթիկի հիման վրա, որը պետք է լրացվի և հատկացվի ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված կամ ՀՖՖ Բժշկական կանոնակարգում նախատեսված կարգով և կնքվի բժշկական հաստատության կնիքով և հավաստվի բժշկական հաստատության գործադիր տնօրենի, իսկ նրա բացակայության դեպքում՝ գործադիր տնօրենի բուժական կամ արտահիվանդանոցային գծով տեղակալի ստորագրությամբ:

25.02 Ակումբը պարտավոր է լրացված բժշկական ստուգման թերթիկը վերբեռնել Ֆուտբոլի կառավարման համակարգում:

25.03 Եթե ֆուտբոլիստը տվյալ մրցաշրջանում առաջնության որևէ ակումբի կազմում արդեն իսկ անցել է տվյալ ժամանակաշրջանի համար սահմանված բժշկական ստուգումը, ապա վերահայտավորվելու դեպքում կրկնակի բժշկական ստուգում չի պահանջվում, սակայն վերահայտավորող ակումբը պետք է վերհայտավորման դիմումին կից Ֆուտբոլի կառավարման համակարգում վերբեռնի տվյալ ֆուտբոլիստի բժշկական համապատասխան փաստաթուղթը:

ԳԼՈՒԽ 7: ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ

Հոդված 26. Ֆուտբոլիստների և թիմի անձնակազմի մասնակցությունը

26.01 Ֆուտբոլիստները և թիմերի անձնակազմերը ֆուտբոլային հանդիպումներին մասնակցում են ՀՖՖ նույնականացման քարտով, իսկ բացառիկ դեպքում քաղաքացիական անձնագրով՝ ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժնի համաձայնությամբ:

26.02 Խաղին կարող են մասնակցել միայն խաղի արձանագրությունում նշված ֆուտբոլիստները:

26.03 Օտարերկրյա ֆուտբոլիստների մասնակցությունը մանկապատանեկան առաջնություններում չի արգելվում:

26.04 Սույն կանոնակարգի շրջանակներում Եվրասիական Տնտեսական Միության (ԵԱՏՄ) անդամ պետությունների քաղաքացիները չեն համարվում օտարերկրյա ֆուտբոլիստներ:

26.05 Եթե խաղին ներկա չէ յուրաքանչյուր թիմից առնվազն մեկ մարզիչ, ինչպես նաև դաշտի տեր թիմը չի ապահովել բժշկի ներկայությունը, ապա խաղը չի կայանում: Եթե խաղի ժամանակահատվածում թիմը մնացել է առանց գլխավոր մարզչի (հեռացվել է խաղադաշտից), ապա նրա պարտականությունները պետք է կատարի խաղի արձանագրության մեջ նշված գլխավոր մարզչի օգնականը կամ խաղի արձանագրության մեջ նշված մեկ այլ մարզիչ, և խաղը շարունակվում է: Եթե խաղի ընթացքում թիմը մնացել է առանց գլխավոր մարզչի, գլխավոր մարզչի օգնականի կամ խաղի արձանագրության մեջ նշված մեկ այլ մարզչի, ապա խաղը չի անցկացվում և համարվում է չկայացած՝ այն ակումբի մեղքով, որի համար մրցավարը համապատասխան գրառում է կատարում խաղի արձանագրությունում:

26.06 Ակումբների ներկայացուցիչները պատասխանատու են արձանագրությունում ընդգրկված ֆուտբոլիստների մասնակցության փաստաթղթերի իսկության համար:

26.07 Խաղի ժամանակահատվածում խաղին մասնակցած (արձանագրությունում նշված) ֆուտբոլիստների ինքնության վերաբերյալ մրցակից թիմի մոտ խախտում նկատելու դեպքում մրցակից թիմի անձնակազմի անդամը պետք է խաղից հետո առնվազն 30 րոպեի ընթացքում ենթադրյալ խախտման վերաբերյալ հայտնի խաղի մրցավարին, ով պետք է նշում կատարի խաղի արձանագրության համապատասխան բաժնում: Ենթադրյալ իրավախախտման վերաբերյալ հայտնած թիմը պարտավոր է խաղի ավարտից հետո առնվազն 24 ժամվա ընթացքում ներկայացնել իր կողմից վկայակոչված խախտումը հավաստող համապատասխան ապացույցները: Խաղի ավարտից հետո 24 ժամվա ընթացքում ենթադրյալ խախտումը հիմնավորող ապացույցներ չներկայացնելու դեպքում վիճարկման վերաբերյալ կատարված նշումը ենթակա չէ քննության: Յուրաքանչյուր դեպքում մրցակից թիմը կարող է նշված ենթադրյալ խախտման վերաբերյալ բողոք-դիմում, ներկայացնել՝ նշելով սահմանված ժամկետում չներկայացնելը հարգելի համարող հանգամանքները: Տվյալ դեպքում բողոքը քննող մարմինը քննության է առնում բողոքը, եթե առկա է բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և այն բավարարվում է վերջինիս կողմից:

26.08 Գրության մեջ պետք է նշվի ինքնության վերաբերյալ կասկած հարուցած ֆուտբոլիստի վերնաշապիկի համարը, նրա անունը, ազգանունը՝ ըստ խաղի արձանագրության, կասկածի բնույթի մասին շարադրանքը, դիմում ներկայացնողի անունը, ազգանունը, պաշտոնը, ինչպես նաև ստորագրությունը և դիմումի ներկայացման ժամը:

Ֆուտբոլիստների ինքնության ստուգման վերաբերյալ դիմում ստանալու դեպքում խաղը սպասարկող անձնակազմը պարտավոր է կազմակերպել և իրականացնել ստուգման հետևյալ գործառույթները՝

- արձանագրությունում նշված ֆուտբոլիստը (ֆուտբոլիստները) իր մարզչի հետ հրավիրվում է մրցավարական սենյակ, որտեղ խաղը սպասարկած մրցավարական խմբի անդամների և դիմում ներկայացրած անձի ներկայությամբ կատարվում է տվյալ ֆուտբոլիստի (ֆուտբոլիստների) ինքնության ստուգում ՀՖՖ նույնականացման քարտի միջոցով,
- ստուգման արդյունքները ձևակերպվում է արձանագրությունում, որի տակ ստորագրում են տեսուչը և/կամ մրցավարական անձնակազմը, երկու թիմերիմարզիչները: Կազմված արձանագրության վերաբերյալ առարկություններ

ունենալու դեպքում նշված անձինք կարող են դրանք գրավոր կերպով ներառել արձանագրությունում, Ֆուտբոլի Կառավարման Համակարգում կամ ծանուցել էլեկտրոնային փոստի միջոցով:

- Այն դիմումները, որոնք չեն համապատասխանի վերը նշված դրույթներին, քննության առարկա չեն դառնա:

26.09 Մ-15 տարեկանների մանկապատանեկան առաջնության հայտավորված ֆուտբոլիստները կարող են մասնակցել նույն ակումբի Առաջին խմբի և Բարձրագույն խմբի առաջնությունների թիմի հանդիպումներին՝ պահպանելով տարիքային առանձնահատկությունները:

26.10 Մ-13 տարեկանների մանկապատանեկան առաջնության հայտավորված ֆուտբոլիստները կարող են մասնակցել նույն ակումբի Մ-15 տարեկանների առաջնության թիմի հանդիպումներին՝ պահպանելով տարիքային առանձնահատկությունները:

26.11 Մ-11 տարեկանների մանկապատանեկան առաջնության հայտավորված ֆուտբոլիստները կարող են մասնակցել նույն ակումբի Մ-13 տարեկանների առաջնության թիմի հանդիպումներին պահպանելով տարիքային առանձնահատկությունները:

26.12 Այն խաղացողները, որոնց կթույլատրվի խաղալ երկու լիգաներում, պետք է պահպանեն խաղերի միջև 24-ժամյա ընդմիջումը (առաջին խաղի ավարտ - երկրորդ խաղի սկիզբ):

26.13 Խաղի ընթացքում տեխնիկական գոտում գտնվելու և պահեստայինների նստարանին նստելու իրավունք ունեն միայն խաղի արձանագրությունում նշված անձինք:

26.14 Արգելվում է ծխելը մարզադաշտի տեխնիկական գոտում, ինչի նկատմամբ հսկողությունը պետք է իրականացվի դաշտի տեր ակումբի կողմից:

26.15 Արգելվում է սույն կանոնակարգով սահմանված կարգով որպես ակումբի գլխավոր մարզիչ չգրանցված անձի, ներառյալ ակումբի մեկ այլ պաշտոնում գրանցված անձի կողմից, գլխավոր մարզչի պարտականությունների փաստացի կատարումը մեկ մրցաշրջանի ընթացքում երկուսից ավելի անգամ, ինչպես նաև

ակումբի կողմից տվյալ անձի պարբերաբար ներկայացումը որպես ակումբի գլխավոր մարզիչ (ներառյալ համացանցում, տպագիր մամուլում, փաստաթղթերում և այլ եղանակներով):

Սույն կետը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ սույն կանոնակարգով սահմանված կարգով որպես ակումբի գլխավոր մարզիչ գրանցված անձը խաղին բացակայում է որակազրկման կամ այլ օբյեկտիվ պատճառներով, և նրա փոխարեն սահմանված կարգով գլխավոր մարզչի համապատասխան գործառույթներն իրականացնում է գլխավոր մարզչի օգնականը:

26.16 Ակումբի մանկապատանեկան թիմում հայտավորված մարզիչն իրավունք ունի հայտավորվել նաև Բարձրագույն և Առաջին խմբի մրցումներին մասնակցող թիմի անձնակազմում միայն այն դեպքում, երբ առկա է համատեղությամբ աշխատանք կատարելու համապատասխան հիմք:

Հոդված 27. Խաղի արձանագրություն

27.01 Յուրաքանչյուր խաղ պետք է ունենա արձանագրություն:

27.02 Արձանագրության առաջին մասը կազմվում է խաղի մասնակից ակումբների կողմից: Ակումբների ներկայացուցիչները խաղասկզբից ոչ ուշ, քան 30 րոպե առաջ Ֆուտբոլի կառավարման համակարգում պետք է մուտքագրեն խաղի արձանագրության իրենց հատվածը: Յուրաքանչյուր ակումբ մուտքագրում է խաղին մասնակցող հիմնական և փոխարինող (պահեստային) ֆուտբոլիստներին և նրանց մարզաշապիկի համարները, ինչպես նաև թիմի անձնակազմի անդամներին: Եթե տեխնիկական պատճառներով հնարավոր չէ լրացնել խաղի արձանագրությունը Ֆուտբոլի կառավարման համակարգում, ապա արձանագրության առձեռն տարբերակը պետք է լրացվի ակումբի կողմից և տրամադրվի մրցավարական անձնակազմին:

27.03 Արձանագրության մեջ կարող են նշվել միայն այն ֆուտբոլիստները և թիմի անձնակազմի անդամները, ովքեր հայտավորված են և որակազրկված չեն տվյալ խաղին մասնակցելու համար: Չհայտավորված և որակազրկված ֆուտբոլիստների խաղին մասնակցության պատասխանատվությունը կրում է տվյալ ակումբը:

27.04 Մ-15 տ. խմբերի առաջնությունների հանդիպումների արձանագրությունների մեջ լրացվում է նվազագույնը 7 և առավելագույնը 22 ֆուտբոլիստ:

27.05 Մ-13տ. խմբերի առաջնությունների խաղերի արձանագրության մեջ լրացվում է նվազագույնը 7 և առավելագույնը 18 ֆուտբոլիստ:

27.06 Մ-11տ. խմբերի առաջնությունների խաղերի արձանագրության մեջ լրացվում է նվազագույնը 5 և առավելագույնը 16 ֆուտբոլիստ:

27.07 Ակումբների և մրցավարի կողմից կազմված արձանագրությունները միացվում են և համարվում են խաղի մեկ միասնական արձանագրություն:

27.08 Մրցավարը խաղի ավարտից հետո առավելագույնը երկու ժամվա ընթացքում կազմում է խաղի արձանագրությունը՝ մուտքագրելով այն Ֆուտբոլի կառավարման համակարգում:

27.09 Եթե տեխնիկական պատճառներով Ֆուտբոլի կառավարման համակարգում հնարավոր չէ լրացնել հաշվետվությունը, ապա մրցավարը պետք է արձանագրությունը լրացնի գրավոր, ներկայացնի այն ՀՖՖ մրցավարական և տեսչական դեպարտամենտ, այնուհետև 24 ժամվա ընթացքում լրացնի իր հաշվետվությունն առցանց:

Հոդված 28. Ֆուտբոլիստների փոխարինումը

28.01 Մ-15 տարեկանների առաջնության խաղերում թույլատրվում է կատարել առավելագույնը 7 փոխարինում: Բոլոր թիմերը յուրաքանչյուր խաղում պարտավոր են կատարել առնվազն 3 պարտադիր փոխարինում: Փոխարինված 3 խաղացողները պետք է ստանան նվազագույնը 15 րոպե խաղաժամ:

28.02 Խաղի ընթացքի հաճախակի ընդհատումից խուսափելու նպատակով Մ-15 տարեկանների առաջնության յուրաքանչյուր թիմ խաղի ընթացքում ունի միայն 3 հնարավորություն (դադար)՝ փոխարինում կատարելու համար: Ընդմիջման ժամանակ կատարված փոխարինումները չեն հանդիսանում վերոնշյալ իմաստով

դադարների ժամանակ կատարված փոխարինումներ: Դադարների վերահսկումն իրականացվում է խաղի գլխավոր մրցավարի կողմից:

28.03 Եթե երկու թիմերն էլ փոխարինում կատարեն նույն պահին (ոչ ընդմիջմանը), սա կհաշվարկվի որպես յուրաքանչյուր թիմի 3 հնարավորություններից մեկականը:

28.04 28.01 կետերով սահմանված փոխարինումների առավելագույն քանակը թիմի(երի) կողմից խախտելու դեպքում տվյալ թիմին(երին) ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի կողմից շնորհվում է տեխնիկական պարտություն 0:3 հաշվով:

28.05 Մ-13 տարիքային խմբի առաջնությունների հանդիպումներում արձանագրության մեջ լրացված բոլոր ֆուտբոլիստները ենթակա են պարտադիր փոխարինման: Հիմնական կազմի և պարտադիր փոխարինման ենթակա ֆուտբոլիստները պետք է ստանան նվազագույնը 10 րոպե խաղային ժամանակահատված:

28.06 Մ-11 տարիքային խմբի առաջնությունների հանդիպումներում արձանագրության մեջ լրացված բոլոր ֆուտբոլիստները ենթակա են պարտադիր փոխարինման: Հիմնական կազմի և պարտադիր փոխարինման ենթակա ֆուտբոլիստները պետք է ստանան նվազագույնը 8 րոպե խաղային ժամանակահատված:

28.07 Երկրորդ դարպասապահ չլինելու դեպքում թիմի հիմնական դարպասապահը պարտադիր պետք է փոխարինվի այլ դիրքի խաղացողով:

28.08 Նախախաղային խորհրդակցության ժամանակ մրցավարը որոշում է նախավարժանք անցկացնելու վայրը: Խաղի ընթացքում միաժամանակ նախավարժանք կարող են անցկացնել մինչև 5 պահեստային ֆուտբոլիստներ, որի մասին վերջնական որոշումը կայացնում է տվյալ խաղի մրցավարը՝ հաշվի առնելով մարզադաշտի փոխարինողների նախավարժանքի համար նախատեսված հնարավորությունները:

28.09 Երկու թիմերի՝ խաղի հաստատված արձանագրությունները Ֆուտբոլի կառավարման համակարգ մուտքագրելուց հետո՝ մինչև խաղի սկզբնահատվածը, չի թույլատրվում կատարել փոփոխություններ՝ բացառությամբ հետևյալ դեպքերի՝

ա) Աղջիկների մանկապատանեկան բոլոր առաջնություններում, եթե մեկնարկային կազմում արձանագրության մեջ նշված ֆուտբոլիստներից որևէ մեկն ի վիճակի չէ սկսել խաղը անսպասելի ֆիզիկական անկարողության պատճառով, ապա նա կարող է փոխարինվել միայն արձանագրությունում նշված փոխարինողներից ցանկացած մեկով: Այս պարագայում փոխարինողների քանակը չի նվազեցվում: Մեկնարկային կազմում արձանագրության մեջ նախապես նշված ֆուտբոլիստներից այն ֆուտբոլիստը, որը անսպասելի ֆիզիկական անկարողության պատճառով փոխարինվել է մինչև խաղի սկզբնահարվածը, այլևս չի կարող նշված լինի տվյալ խաղի արձանագրության մեջ, և, հետևաբար, խաղի ընթացքում չի կարող գտնվել տեխնիկական գոտում:

բ) Եթե խաղի արձանագրությունում նշված փոխարինողներից որևէ մեկն անսպասելի ֆիզիկական անկարողության/վնասվածքի պատճառով ի վիճակի չէ մասնակցել խաղին, ապա նա/նրանք կարող է/են փոխարինվել միայն հայտավորված ֆուտբոլիստով/ներով, ով/ովքեր նշված չէ/չեն տվյալ խաղի արձանագրությունում:

գ) Եթե դարպասապահներից որևէ մեկն անսպասելի ֆիզիկական անկարողության /վնասվածքի պատճառով ի վիճակի չէ մասնակցել խաղին, ապա նա/նրանք կարող է/են փոխարինվել միայն հայտավորված դարպասապահներով/խաղացողներով, ով/ովքեր նշված չէ/չեն տվյալ խաղի արձանագրությունում: Տվյալ խաղի մեկնարկային կազմի դարպասապահին կարող է փոխարինել միայն պահեստային դարպասապահը կամ խաղացողը, իսկ հայտացուցակում կարող է/են ավելանալ միայն հայտավորված դարպասապահ/ներ կամ խաղացող/ներ, ով/ովքեր նշված չէ/չեն տվյալ խաղի արձանագրությունում:

28.10 Վերը նշված դեպքերում մինչև տվյալ խաղի ավարտը ակումբը պարտավոր է ներկայացնել համապատասխան տեղեկանք՝ ստորագրված ակումբի բժշկի կողմից, որտեղ մանրամասն նկարագրված կլինի վնասվածքի բնույթը:

28.11 Գլխուղեղի ցնցման կասկածի դեպքում մրցավարը դադարեցնում է խաղը, որպեսզի թույլ տա թիմի բժշկին զննել և գնահատել տուժած խաղացողի վիճակն՝ ըստ ԻՖԱԲ-ի «Խաղի կանոնների»: Սկզբունքորեն դա պետք է տևի ոչ ավել, քան երեք րոպե, եթե լուրջ միջադեպը չի պահանջում խաղացողի բուժումն իրականացնել խաղադաշտում կամ անշարժացնել խաղադաշտում՝ անմիջապես հիվանդանոց տեղափոխելու համար (օրինակ՝ ողնաշարի վնասվածք): Գլխի վնասվածք ստացած

ցանկացած խաղացողի, ով պոտենցիալ գլխուղեղի ցնցման կասկածի զննման կարիք ունի, կթույլատրվի խաղը շարունակել միայն գնահատումից հետո, եթե մրցավարին դա հաստատի թիմի բժիշկը:

ԳԼՈՒԽ 8: ՄԱՐԶԱՀԱԳՈՒՍՏԸ

Հոդված 29. Խաղի մարզահագուստը

29.01 Տնային կամ արտագնա մարզագահուստի փոփոխության վերաբերյալ անհրաժեշտ է ոչ ուշ քան 2 օր առաջ տեղեկացնել ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժնին և մրցակից ակումբին: Ակումբների անհամաձայնության դեպքում վերջնական որոշումը կայացնում է ՀՖՖ-ն:

29.02 Բոլոր տարիքային խմբերի առաջնություններում մրցող թիմերը յուրաքանչյուր խաղին պետք է ապահովեն տնային և արտագնա մարզահագուստների առկայությունը:

29.03 Տեխնիկական գոտում գտնվող թիմի անձնակազմի անդամները պետք է կրեն մրցող թիմերի մարզահագուստի գույների հետ չհամընկնող հագուստ:

29.04 Մրցող թիմերի բժիշկները, մերսողները պետք է լինեն մարզահագուստով:

29.05 Ֆուտբոլիստին արգելվում է խաղի ժամանակ կրել ցանկացած տիպի զարդ: Այն բացառիկ դեպքերում, երբ ֆուտբոլիստը կրում է որևէ զարդ, որն անհնար է հանել առանց ֆիզիկական ցավ պատճառելու, խաղի մրցավարի թույլտվությամբ վերջինս կարող է կրել այդ զարդը՝ բացառապես այն ծածկելու պարագայում:

Հոդված 30. Մարզահագուստի գույները

30.01 Խաղերի ընթացքում հայտավորված բոլոր ֆուտբոլիստների խաղային մարզահագուստները պետք է լինեն միանման՝ սույն կանոնակարգի Գլուխ 8-ի պահանջներին համապատասխան: Ակումբները պետք է ունենան 2 տարբեր գույների խաղային մարզահագուստ՝ ներառյալ դարպասապահների

մարզահագուստները:

30.02 Բոլոր տարիքային խմբերի առաջնություններում մրցող թիմերը նախախաղային խորհրդակցությանը մրցավարի պահանջի դեպքում պարտավոր են ներկայացնել ակումբի 2 տարբեր գույների խաղային մարզահագուստները (մարզաշապիկ, կիսավարտիք, կիսագուլպա):

30.03 Թիմերը խաղից 1 օր առաջ նախապես կարող են համաձայնեցնել խաղային մարզահագուստները:

30.04 Մանկապատանեկան առաջնությունների բոլոր խաղերի ժամանակ մարզահագուստի գույների համընկման պարագայում մարզահագուստը փոխում է դաշտի տեր թիմը: Դաշտի տեր թիմի մարզահագուստի փոփոխությունից հետո գույների համընկման պարագայում մարզահագուստը փոխում է հյուր թիմը: Յուրաքանչյուր պարագայում թիմերի մարզահագուստներ գույները չպետք է համընկնեն իրար: Եթե մարզահագուստների գույները համընկնում են, և թիմերը չեն կարողանում ընդհանուր հայտարարի գալ գույների ընտրության հարցում, ապա վերջնական որոշումը կայացնում է խաղի մրցավարը:

Հոդված 31. Խաղահամարները

31.01 Թիմերի մարզահագուստի մեջքի հատվածի կենտրոնական մասում պարտադիր չէ, սակայն կարող է փակցված լինեն ֆուտբոլիստների խաղահամարները: Խաղահամարները թույլատրվում է նաև փակցնել մարզահագուստի դիմացի մասում:

31.02 Ֆուտբոլիստների խաղահամարների առկայության դեպքում ֆուտբոլիստների խաղահամարները պետք է լինեն 1-ից մինչև 99-ի միջակայքում: Կարող են օգտագործվել միայն ամբողջական թվեր: 1-ին համարը պետք է գրանցվածլինի թիմի դարպասապահի անվամբ:

31.03 Խաղահամարները պետք է լինեն նույն գույնի, ինչ ֆուտբոլիստների մարզաշապիկի վրայի ազգանունները (կեղծանունները), հստակ ընթեռնելի լինեն մրցավարական անձնակազմի, մեկնաբանների, հանդիսականների համար ցերեկային լույսի և մարզադաշտի լուսավորության պայմաններում:

31.04 Մանկապատանեկան բոլոր տարիքային առաջնություններում թույլատրվում է փոփոխել ֆուտբոլիստների խաղաշապիկների խաղահամարները առաջնության ցանկացած հաստվածում: Գործողությունը կատարվում է Ֆուտբոլի կառավարման համակարգի «Հայտավորում» բաժնում:

Հոդված 32. Մարզահագուստի ազգանունները

32.01 Մանկապատանեկան բոլոր տարիքային առաջնություններում մասնակից թիմերի մարզահագուստի մեջքի հատվածում՝ ֆուտբոլիստի խաղահամարների վերևում պարտադիր չէ, սակայն, կարող է փակցված լինեն ֆուտբոլիստների ազգանունները, որոնք պետք է համապատասխանեն տվյալ խաղի արձանագրությունում նշված տվյալ ֆուտբոլիստների ազգանուններին, իսկ առանձին դեպքերում՝ կեղծանունները: Առկայության դեպքում այն պետք է գրված լինի թիմի բոլոր ֆուտբոլիստների խաղաշապիկների վրա:

32.02 Ազգանունների (կեղծանունների) առկայության դեպքում՝ դրանք պետք է գրված լինեն հայատառ կամ լատինատառ, միագույն, ընթեռնելի, ընդ որում՝ մարզահագուստի նկատմամբ սույն հոդվածով սահմանված լեզվի պահանջը ենթակա է կատարման ակումբի կողմից ամբողջ թիմում հայտավորված ֆուտբոլիստների նկատմամբ՝ որպես մեկ միասնություն:

ԳԼՈՒԽ 9: ԱԿՈՒՄԲԻ ԱՆՎԱՆՄԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ

Հոդված 33. Ակումբի ինքնության և իրավական խմբի կառուցվածքի փոփոխությունը

33.01 Աղջիկների մանկապատանեկան ֆուտբոլի մրցումների մասնակից ակումբի ինքնության (անվանում, տարբերանշան, գույներ, իրավաբանական հասցե) փոփոխության գրանցումը թույլատրվում է միայն միջմրցաշրջանային հատվածում: Արգելվում է կատարել ակումբի ինքնության փոխություն խաղաշրջանի ընթացքում:

33.02 Եթե ակումբի ինքնության և/կամ իրավական խմբի կառուցվածքի փոփոխության գործընթացում փոփոխվում է միայն ակումբի անվանումը և տարբերանշանը և/կամ գույները, իրավաբանական հասցեն, ապա անվանափոխության և իրավահաջորդության ճանաչման գործընթացը կատարվում է 34 Հոդվածում սահմանված քայլերի հաջորդականությամբ և ընթացակարգով:

33.03 Եթե ակումբի ինքնության և/կամ իրավական խմբի կառուցվածքի փոփոխության գործընթացքում ակումբի ինքնության փոփոխության հետ մեկտեղ կամ առանց ինքնության փոփոխության տեղի է ունենում իրավական խմբի կառուցվածքի, վերահսկող կողմի և դրա անդամների, կազմակերպաիրավական ձևի փոփոխություններ կամ ակումբի վերակազմակերպում, ապա անվանափոխության և իրավահաջորդության ճանաչման գործընթացը կատարվում է սույն կանոնակարգի Հոդված 35-ի պահանջների և ընթացակարգի համաձայն:

33.04 Ակումբները անվանման փոփոխության նպատակով կարող են դիմել ՀՖՖ-ին միայն հետևյալ պահանջներից որևէ մեկի բավարարման դեպքում՝

ա) ակումբի հիմնադրումից անցել է առնվազն 3 օրացուցային տարի, կամ

բ) ակումբի նախորդ անվանափոխությունից անցել է առնվազն 3 օրացուցային տարի:

Հոդված 34. Ակումբի ինքնության (անվանում, տարբերանշան, գույներ, իրավաբանական հասցե) փոփոխությունը և դրա գրանցումը ՀՖՖ-ում

34.01 Ակումբը պետք է գրավոր դիմի ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժնին՝ հայտնելով ակումբի ինքնության (անվանում, տարբերանշան և/կամ գույներ, իրավաբանական հասցե) փոփոխության մտադրության, դրա հիմնավոր պատճառների, ինչպես նաև նախընտրելի նոր անվանման մասին: Սույն գործընթացը պատշաճ կատարելու համար հարկավոր է ներակայացնել դիմում, որը պետք է ներառի հետևյալ տեղեկատվությունը.

ա) առաջարկվող նոր անվանումը, որը պետք է համապատասխանի սույն հոդվածի 34.02 կետի պահանջներին,

բ) անվանափոխության պատճառներն ու հիմքերը,

գ) ակումբի իրավական խմբի կառուցվածքը անվանափոխությունից առաջ և ակնկալվող փոփոխությունից հետո,

դ) ակումբի վերահսկող կողմի, նախագահի և սեփականատերերի տվյալները անվանափոխությունից առաջ և ակնկալվող փոփոխությունից հետո,

ե) ակումբի իրավաբանական և գործունեության հասցեները անվանափոխությունից առաջ և ակնկալվող փոփոխությունից հետո,

զ) ակումբի գույները անվանափոխությունից առաջ և հետո,

է) ակումբի ղեկավարի կողմից հաստատված տեղեկանք՝ դիմումի ներկայացման օրվա դրությամբ ակումբի աշխատակիցների (այդ թվում քաղաքացիաիրավական ծառայություններով ներգրավված անձանց և ֆուտբոլիստների), այլ ակումբների և ՀՀ հարկային և սոցիալական ապահովության պետական մարմինների նկատմամբ ֆինանսական պարտավորությունների մասին:

34.02 Ակումբի առաջարկվող նոր անվանումը պետք է համապատասխանի առնվազն հետևյալ բոլոր պահանջներին՝

ա) չունենա որևէ համընկնում ՀՖՖ տեղեկատվական բազայում նախկինում և/կամ ներկայում գրանցված որևէ ակումբի կամ թիմի անվանման հետ,

բ) չունենա որևէ համընկնում ՀՖՖ-ի կողմից կազմակերպած մրցաշարերին մասնակցած որևէ ակումբի կամ թիմի անվանման հետ,

գ) չպարունակի ՀՀ-ում գրանցված որևէ կոմերցիոն ընկերության անվանում,

դ) ասոցացվի Հայաստանի Հանրապետության որևէ տեղանվան կամ պատմամշակութային արժեքի անվանման հետ:

34.03 Սույն հոդվածի 33.01 կետում նշված ակումբի դիմումի և այլ հիմնավորող փաստաթղթերի հիման վրա ՀՖՖ կանանց ֆուտբոլի կոմիտեն 10-օրյա ժամկետում անցկացնում է նիստ և քննարկում տվյալ ակումբի անվանափոխությունը թույլատրելու վերաբերյալ հարցը: Կանանց ֆուտբոլի կոմիտեն իրավունք ունի հաստատելու կամ մերժելու ակումբի կողմից առաջարկվող նոր անվանումը:

34.04 ՀՖՖ կանանց ֆուտբոլի կոմիտեի թույլատվության դեպքում միայն ակումբն է կատարում ակումբի նոր անվան գրանցումը ՀՀ պետական մարմիններում:

34.05 ՀՀ Պետական մարմիններում գրանցելուց հետո ակումբը դիմում է ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժնին՝ ակումբի անվանափոխության, ինչպես նաև իրավահաջորդության հաստատման հարցը ՀՖՖ գործադիր կոմիտեի քննարկմանը ներկայացնելու նպատակով: Ակումբը ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժնին է ներկայացնում ակումբի ղեկավարի կողմից ստորագրված դիմում, պետական ռեգիստրի վկայականի քաղվածք և ՀՖՖ կանանց ֆուտբոլի կոմիտեի որոշման պատճենը:

34.06 Աղջիկների մանկապատանեկան առաջնության հաջորդ մրցաշրջանում ակումբը նոր անվանմամբ իրավունք ունի մասնակցելու միայն վերոնշյալ գործընթացը անցնելուց և ՀՖՖ գործադիր կոմիտեի կողմից հաստատման դեպքում:

34.07 Աղջիկների մանկապատանեկան առաջնության մրցումների մասնակից ակումբների թիմերի անվանումները պետք է համապատասխանեն հետևյալ բոլոր պահանջներին՝

ա) չունենա որևէ համընկնում ՀՖՖ ֆուտբոլի կառավարման համակարգում նախկինում և/կամ ներկայում գրանցված որևէ ակումբի կամ թիմի անվանման հետ,

բ) չունենա որևէ համընկնում ՀՖՖ-ի կողմից կազմակերպած մրցաշարերին մասնակցած որևէ ակումբի կամ թիմի անվանման հետ,

գ) չպարունակի ՀՀ-ում գրանցված որևէ կոմերցիոն ընկերության անվանում,

դ) համապատասխանի ակումբի անվան հետ,

ե) ասոցացվի Հայաստանի Հանրապետության որևէ տեղանվան կամ պատմամշակութային արժեքի անվանման հետ:

Հոդված 35. Ակումբի վերակազմակերպումը կամ իրավական խմբի կառուցվածքի փոփոխությունները

35.01 Ակումբը պետք է գրավոր դիմի ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժնին՝ հայտնելով ակումբի ինքնության, իրավական խմբի կառուցվածքի, վերահսկող կողմի և դրա անդամների, կազմակերպաիրավական ձևի փոփոխության մտադրության մասին: Սույն գործընթացը պատշաճ կատարելու համար հարկավոր է ներկայացնել դիմում, որը պետք է ներառի հետևյալ տեղեկատվությունը.

ա) ակումբի իրավական խմբի կառուցվածքի, վերահսկող կողմի և դրա անդամների, կազմակերպաիրավական ձևի փոփոխության,

բ) ինքնության փոփոխության դեպքում՝ առաջարկվող նոր անվանումը, որը պետք է համապատասխանի սույն Կանոնակարգի 34.02 կետի պահանջներին,

գ) ինքնության փոփոխության դեպքում անվան փոփոխության պատճառներն ու հիմքերը,

դ) ակումբի իրավական խմբի կառուցվածքը ակնկալվող փոփոխությունից առաջ և հետո,

ե) ակումբի վերահսկող կողմի, նախագահի և սեփականատերերի տվյալները ակնկալվող փոփոխությունից առաջ և հետո,

զ) ակումբի իրավաբանական և գործունեության հասցեները ակնկալվող փոփոխությունից առաջ և հետո,

է) ակումբի ղեկավարի կողմից հաստատված տեղեկանք՝ դիմումի ներկայացման օրվա դրությամբ ակումբի աշխատակիցների (այդ թվում քաղաքացիաիրավական ծառայություններով ներգրավված անձանց և ֆուտբոլիստների), այլ ակումբների և ՀՀ հարկային և սոցիալական ապահովության պետական մարմինների նկատմամբ ֆինանսական պարտավորությունների մասին:

35.02 Սույն հոդվածի 34.01 կետում նշված ակումբի դիմումի և այլ հիմնավորող փաստաթղթերի հիման վրա ՀՖՖ կանանց ֆուտբոլի կոմիտեն 10-օրյա ժամկետում անցկացնում է նիստ և քննարկում տվյալ ակումբի անվանափոխությունը թույլատրելու վերաբերյալ հարցը: Կանանց ֆուտբոլի կոմիտեն իրավունք ունի հաստատելու կամ մերժելու ակումբի կողմից առաջարկվող նոր անվանումը:

35.03 ՀՖՖ կանանց ֆուտբոլի կոմիտեի թույլտվության դեպքում միայն ակումբն է կատարում ակումբի նոր անվան գրանցումը ՀՀ պետական մարմիններում:

35.04 ՀՀ Պետական մարմիններում գրանցելուց հետո ակումբը դիմում է ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժնին՝ ակումբի անվանափոխության, վերակազմակերպման, իրավական խմբի կառուցվածքի փոփոխության, ինչպես նաև իրավահաջորդության հաստատման հարցը ՀՖՖ գործադիր կոմիտեի քննարկմանը ներկայացնելու նպատակով: Ակումբը ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժնին է ներկայացնում՝

ա) ակումբի ղեկավարի կողմից ստորագրված դիմում,

բ) պետական ռեգիստրի վկայականի քաղվածք,

գ) ՀՖՖ կանանց ֆուտբոլի կոմիտեի որոշման պատճեն,

դ) դիմումի ներկայացման նախորդող ամսվա վերջին օրվա դրությամբ հաստատված անկախ աուդիտորական եզրակացություն ակումբի ֆինանսական հաշվետվությունների ՖՀՄՍ-ների համապատասխանելիության վերաբերյալ,

ե) դիմումի ներկայացման օրացուցային ընթացիկ տարվա հունվարի 1-ից մինչև դիմումի ներկայացման նախորդող ամսվա վերջին օրվա ժամանակահատվածը ներառող հավաստումներ առ այն, որ ակումբը չունի որևէ ֆինանսական պարտավորություններ աշխատակիցների (այդ թվում քաղաքացիաիրավական ծառայություններով ներգրավված անձանց և ֆուտբոլիստների) և այլ ֆուտբոլային ակումբների նկատմամբ,

զ) հարկ վճարողի միասնական հաշվի քաղվածք, որը կհավաստի ակումբի ֆինանսական պարտավորությունների բացակայությունը ՀՀ հարկային և սոցիալական ապահովության պետական մարմինների նկատմամբ՝ դիմումի ներկայացման նախորդող ամսվա վերջին օրվա դրությամբ:

35.05 Մանկապատանեկան առաջնության հաջորդ մրցաշրջանում ակումբը նոր անվանմամբ և նոր իրավական խմբի կառուվածքով իրավունք ունի մասնակցելու միայն վերոնշյալ գործընթացը անցնելուց և ՀՖՖ գործադիր կոմիտեի կողմից հաստատման դեպքում:

Հոդված 36. Իրավահաջորդությունը

36.01 Ակումբների վերակազմակերպման դեպքում իրավահաջորդությունը կատարվում է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

36.02 Եթե ակումբի վերակազմակերպումից կամ ինքնության փոփոխությունից առաջ ակումբը հանդիսանում է «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության անդամ, ապա անդամության փոխանցումը իրականացվում է ՀՖՖ կանոնադրությամբ սահմանված ընթացակարգով:

ԳԼՈՒԽ 10: ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 37. Վեճերի լուծումը

37.01 Ֆուտբոլային սուբյեկտների միջև ծագած վեճերը ենթակա են լուծման ՀՖՖ, ՈՒԵՖԱ, ՖԻՖԱ այլ նորմատիվ փաստաթղթերով:

37.02 Պայմանագրային հարաբերությունների հետ կապված վեճերը քննարկվում են միայն ՀՖՖ-ում գրանցում ստացած պայմանագրերի առկայության դեպքում:

37.03 Մրցումների անցկացման հետ կապված այն իրավահարաբերությունները, որոնք չեն կարգավորվում սույն կանոնակարգով, ենթակա են կարգավորման ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի, ՖԻՖԱ-ի այլ նորմատիվ փաստաթղթերով:

Հոդված 38. Այլ հարցեր

38.01 Ֆուտբոլիստների կարգավիճակը և տեղափոխությունները կարգավորվում են ՀՖՖ ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգով:

38.02 Սույն կանոնակարգի որևէ դրույթի խախտումը կարող է առաջացնել ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգով սահմանված պատասխանատվության:

38.03 Մրցավարությունն ու տեսչությունը կոպիտ սխալներով անցկացնելու դեպքում սպասարկող անձնակազմի՝ սխալ թույլ տված անդամների նկատմամբ կիրառվում են կարգապահական պատժամիջոցներ՝ համաձայն ՀՖՖ-ի՝ մրցավարությունն ու տեսչությունը կանոնակարգող նորմատիվ փաստաթղթերի:

38.04 Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում ՀՖՖ գործադիր կոմիտեի կողմից հաստատման պահից:

ՀՖՖ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՖՈՒՏԲՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ՄՐՑԱՇՐՋԱՆ 2026/2027)	
Հաստատված է՝ ՀՖՖ գործադիր կոմիտեի կողմից 23.07.2026թ.-ին	*Ուժի մեջ է մտնում 23.07.2026թ.-ից*

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԲՈԼԻ ԲԱԺԻՆ
ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂՈՑ 27
ԵՐԵՎԱՆ, 0010, ՀԱՅԱՍՏԱՆ

ԷԼ. ՓՈՍՏ. WOMENS@FFA.AM

WWW.FFA.AM